

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*2016 թ. պետական ախարտական և միասնական
քննությունների թեստային առաջադրանքների*

ՇՏԵՄԱՐԱՆ

Գիրք երրորդ

երրորդ՝ լրանշակված հրատարակություն



ՉԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ-2016

Հաստատված է Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից

ՀՏԴ 373.1 : 911
ԳՄԴ 74.2 + 26.8
Ա.653

Խմբագիրներ՝ Մաքսիմ Մանասյան, Արսեն Գրիգորյան

Աշխատանքների համակարգող՝ Սուսաննա Սարգսյան

*Հեղինակային խումբ՝ Մաքսիմ Մանասյան (աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ)
Արսեն Գրիգորյան (աշխ. գիտ. թեկն., դոցենտ, ԵՊՀ)
Գուրգեն Հովհաննիսյան (աշխ. գիտ. թեկն., դոցենտ, ԵՊՀ)
Արմեն Հովսեփյան (ԿԱԻ բաժնի վարիչ)
Աշոտ Խաչատրյան (ԿԱԻ մասնագետ)
Սուսաննա Սարգսյան (ԳԹԿ «Աշխարհագրություն» առարկայի
առաջատար մասնագետ)
Լուսինե Ասլանյան (աշխարհագրագետ)*

Ա.653 Աշխարհագրություն: 2016 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարան: Գիրք երրորդ / Մ. Մանասյան, Ա. Գրիգորյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Հովսեփյան, Ա. Խաչատրյան, Ս. Սարգսյան, Լ. Ասլանյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2016. — 212 էջ:

ՀՏԴ 373.1 : 911
ԳՄԴ 74.2 + 26.8

ISBN 978-9939-68-255-6

© Հեղինակային խումբ, 2016
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2016

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կառավարության և ՀՀ ԿԳ նախարարության կրթական քաղաքականության իրականացման շրջանակներում ներկայացվում է «Աշխարհագրություն» առարկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարանը՝ նախատեսված հիմնական և ավագ դպրոցների սովորողների, նախորդ տարիների շրջանավարտների, միասնական և պետական ավարտական քննություններին նախապատրաստվողների, ինչպես նաև աշխարհագրություն դասավանդող ուսուցիչների համար: Շտեմարանը հարմար է նաև սովորողների գիտելիքների յուրացման մակարդակի ինքնաստուգման և ինքնագնահատման համար:

Շտեմարանում ընդգրկված են հանրակրթական դպրոցի «Աշխարհագրություն» առարկայի ծրագրային նյութին համապատասխանող և դասընթացի գրեթե բոլոր բաժիններին վերաբերող առաջադրանքներ: Շտեմարանը կազմելիս առաջին հերթին հաշվի են առնվել գործող դասագրքերը՝ դրանցում ընդգրկված քարտեզագրական նյութերը, հավելվածներում տեղ գտած տվյալները, ինչպես նաև որպես օժանդակ նյութ օգտագործվել են դպրոցական ատլասները: Շտեմարանը համապատասխանում է «Պետական ավարտական և միասնական քննությունների ուղեցույց»-ի պահանջներին:

Հեղինակներ

ZANGAK

ՊԼՆՈՒԲԱՆԵՐԻ ՓՈՒԼՏ

1. Աշխարհագրության կառուցվածքի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Որպես աշխարհագրական թաղանթի բնական բաղադրիչների հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ աշխարհագրությունը մտնում է բնական գիտությունների, իսկ որպես մարդու շրջանի հետազոտությամբ զբաղվող գիտություն՝ հասարակական գիտությունների համակարգի մեջ:
- 2) Հասարակական աշխարհագրական գիտություններն ուսումնասիրում են աշխարհագրական թաղանթի ոլորտներում տեղի ունեցող բնական երևույթները:
- 3) Բնական աշխարհագրության կազմում առանձնահատուկ և կարևոր տեղ ունի բնակչության աշխարհագրությունը, քանի որ նրա ուսումնասիրության առարկան սերտորեն կապված է բնական միջավայրի հետ:
- 4) Ընդհանուր աշխարհագրությունն ուսումնասիրում է այն օրենքներն ու օրինաչափությունները, որոնք ընդհանուր են թե՛ բնական, թե՛ հասարակական երևույթների տարածքային փոփոխությունների համար:
- 5) Բնական աշխարհագրության ճյուղային գիտություններից են երկրաձևաբանությունը, կլիմայագիտությունը, հողերի աշխարհագրությունը:
- 6) Հնէաաշխարհագրությունը, լանդշաֆտագիտությունը, մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը համալիր գիտություններ են հասարակական աշխարհագրության կազմում:

2. Աշխարհագրական մշակույթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխարհագրական հետազոտությունների մեթոդները աշխարհագրական մշակույթի բաղադրիչներից են:
- 2) Աշխարհի աշխարհագրական պատկերը բազմակողմանիորեն ներկայացնում է երկրի աշխարհագրական թաղանթի, բնակչության, տնտեսության, բնության և հասարակության փոխազդեցության ամբողջական պատկերը:
- 3) Տարածականությունն աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից է:
- 4) Կոնկրետությունն աշխարհագրական գիտության լեզվի բաղադրիչներից է:
- 5) Տեղանունները աշխարհագրական գիտության լեզվի բաղադրիչներից են:
- 6) Աշխարհագրական հասկացություններն ու տերմինները աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից են:

3. Աշխարհագրական հետազոտության մեթոդների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխարհագրական հետազոտության մեթոդներից լայն տարածում ունի դաշտային (արշավախմբային) մեթոդը:
- 2) Համագիտական մեթոդները կիրառվում են միայն գիտության որոշ ճյուղերում:
- 3) Նկարագրական մեթոդը գիտական ճանաչողության հնագույն մեթոդներից է:
- 4) Աշխարհագրական հետազոտության մեթոդները լինում են մասնավոր աշխարհագրական և համաաշխարհագրական:
- 5) Համեմատական աշխարհագրական մեթոդի էությունն այն է, որ համեմատելով աշխարհագրական տարբեր օբյեկտներ՝ փորձում են բացահայտել դրանց զարգացման ընդհանուր օրինաչափությունները և տարբերությունները:
- 6) Կոնկրետ գիտական մեթոդները կիրառելի են գիտության բոլոր ճյուղերում:

4. Տեղանքում կողմնորոշվելու վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Կողմնորոշվել կարելի է Արեգակի միջոցով:
- 2) Կողմնորոշվել կարելի է կիսալուսնի միջոցով:
- 3) Կողմնորոշվել կարելի է Բևեռային աստղի միջոցով:
- 4) Ծառի բնի տարեկան օղակները հարավային կողմում իրար ավելի մոտ են, քան հյուսիսայինում:
- 5) Ճշգրիտ կողմնորոշվել կարելի է կողմնացույցի միջոցով:
- 6) Եթե դեմքով կանգնենք դեպի հյուսիս, ապա թիկունքի կողմը կլինի հարավը, աջը՝ արևմուտքը, ձախը՝ արևելքը:

5. Ազիմուտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հյուսիսի ազիմուտը 0° կամ 360° է:
- 2) Արևմուտքի ազիմուտը 90° է:
- 3) Հարավի ազիմուտը 180° է:
- 4) 105° ազիմուտը հորիզոնի հարավարևմտյան կողմում է:
- 5) 95° ազիմուտը հորիզոնի հյուսիսարևելյան կողմում է:
- 6) 115° ազիմուտը հորիզոնի հարավարևելյան կողմում է:

6. Երկրի ձևի և չափերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Արեգակի շուրջը պտտվելու հետևանքով Երկիրը հասարակածային շրջաններում «փքվել» է, իսկ բևեռներում՝ սեղմվել:
- 2) Իր առանցքի շուրջը պտտվելու հետևանքով Երկիրը հասարակածային շրջաններում «փքվել» է, իսկ բևեռներում՝ սեղմվել:
- 3) Գնդաձևության և մեծ խտության շնորհիվ Երկրի շուրջը ստեղծվում է ձգողական ուժեղ դաշտ, որն ուղղված է դեպի Երկրի կենտրոն:
- 4) Երկրի հասարակածային շառավղի երկարությունը 6357 կմ է:
- 5) Օվկիանոսներն ու ծովերը զբաղեցնում են Երկրի մակերեսի 71 %-ը:
- 6) 60° զուգահեռականի 1° աղեղի երկարությունը 111 կմ է:

7. Աստիճանացանցի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրի կենտրոնով անցնող այն երևակայական գիծը, որի շուրջը պտտվում է Երկիրը, կոչվում է միջօրեական:
- 2) Գլոբուսի վրա բոլոր միջօրեականներն ու զուգահեռականները հատվում են ուղիղ անկյան տակ:
- 3) Աստիճանացանցի միջոցով որոշում են յուրաքանչյուր վայրի աշխարհագրական կոորդինատները՝ աշխարհագրական լայնությունը և աշխարհագրական երկայնությունը:
- 4) Աշխարհագրական լայնությունը լինում է արևելյան և արևմտյան՝ 0° -ից մինչև 180° :
- 5) Աշխարհագրական երկայնությունը լինում է հյուսիսային և հարավային՝ 0° -ից մինչև 90° :
- 6) Գրինվիչի աստղադիտարանի վրայով անցնող միջօրեականն ընդունվել է որպես զրոյական կամ գլխավոր միջօրեական:

8. Երկրի օրական պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տիեզերքից հյուսիսային բևեռին նայելիս Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է արևելքից արևմուտք ուղղությամբ:
- 2) Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է 20 ժամում:
- 3) Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է 24 ժամում:
- 4) Երկրի օրական պտույտի հետևանքով առաջանում են տարվա եղանակները:
- 5) Երկրի օրական պտույտի հետևանքով առաջանում է գիշերվա և ցերեկվա հերթափոխը:
- 6) Երկրի օրական պտույտի հետևանքով առաջանում է շեղող մի ուժ, որի շնորհիվ Երկրի մակերևույթի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող մարմինները շեղվում են հյուսիսային կիսագնդում դեպի աջ, հարավայինում՝ ձախ:

9. Երկրի օրական պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրի օրական պտույտի հետևանքով առաջանում են ժամերի տարբերություններ:
- 2) Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է արևմուտքից արևելք ուղղությամբ:
- 3) Երկրի օրական պտույտի հետևանքով Միսիսիպի և Վոլգա գետերը քանդում են իրենց ձախ ափը:
- 4) Տիեզերքից հարավային բևեռին նայելիս Երկրի պտույտը կերևա ժամացույցի սլաքի շարժման հակառակ ուղղությամբ:
- 5) Երկրի օրական պտույտի հետևանքով պասսատները հարավային կիսագնդում իրենց նախնական ուղղությունից շեղվում են դեպի ձախ:
- 6) Երկրի օրական պտույտի հետևանքով առաջանում են տարվա եղանակները:

10. Երկրի օրական պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տարվա եղանակների առաջացումը Երկրի՝ իր առանցքի շուրջը պտույտի հետևանք չէ:
- 2) Հասարակածի ուղղությամբ շարժվող օբյեկտների վրա Կորիոլիսի ուժի ազդեցությունն առավելագույնն է:
- 3) Ժամային գոտիները սահմանազատված են զուգահեռականներով:
- 4) Տիեզերքից հյուսիսային բևեռին նայելիս Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է արևմուտքից արևելք ուղղությամբ:
- 5) Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտները հյուսիսային կիսագնդում իրենց սկզբնական ուղղությունից շեղվում են աջ:
- 6) Երկրի օրական պտույտի հետևանքով Պարանա գետը քանդում է իր աջ ափը:

11. Երկրի օրական պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրի օրական պտույտի հետևանքով պասսատները հարավային կիսագնդում շեղվում են աջ:
- 2) Յուրաքանչյուր ժամային գոտի իր նախորդից մեկ ժամով առաջ է, քանի որ Երկիրն իր առանցքի շուրջը պտտվում է արևելքից արևմուտք ուղղությամբ:
- 3) Երևան քաղաքը գտնվում է երկրորդ ժամային գոտում:
- 4) Շարժվող օբյեկտների հետագծի շեղումն իրենց սկզբնական ուղղությունից Երկրի գնդաձևության և իր առանցքի շուրջը պտույտի հետևանք է:
- 5) Տվյալ պահին միջօրեականի վրա դիտված ժամանակը կոչվում է տեղական ժամանակ:
- 6) Եթե հորիզոնական ուղղությամբ շարժվող օբյեկտներն իրենց սկզբնական ուղղությունից շեղվում են ձախ, ապա դրանք հարավային կիսագնդում են:

12. Ժամային գոտիների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մեկ ժամում Երկրի յուրաքանչյուր կետ կատարում է 15° պտույտ:
- 2) Ժամային գոտիները սահմանազատվում են զուգահեռականներով:
- 3) Յուրաքանչյուր ժամային գոտու կենտրոնով անցնող միջօրեականի ժամանակն ընդունված է անվանել գոտիական ժամանակ:
- 4) Յուրաքանչյուր ժամային գոտու ժամանակը մեկ ժամով առաջ է նախորդ գոտու ժամից:
- 5) Երևանը գտնվում է 4-րդ ժամային գոտում:
- 6) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է զրոյական միջօրեականով և Լա Մանշ նեղուցով անցնող միջօրեականով:

13. Ժամային գոտիների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ժամային գոտիները սահմանազատվում են միջօրեականներով, որոնք իրարից հեռու են 15° :
- 2) Ժամային գոտիների սահմանները ցամաքի վրա անցկացվում են պետական կամ վարչական սահմաններով:
- 3) Ամսաթվի փոփոխման գիծն ընդունված է անցկացնել 180° միջօրեականով, Բերինգի նեղուցով անցնող միջօրեականով և շեղումներով:
- 4) Զրոյական կամ 24-րդ ժամային գոտին արևելյան երկայնության $7^\circ 30'$ և $22^\circ 30'$ միջօրեականների միջև է:
- 5) Լոնդոնը 1-ին ժամային գոտում է:
- 6) Մագելանի արշավախումբը 1 օր կորցրել էր, որովհետև նավարկել էր արևմուտքից արևելք ուղղությամբ:

14. Երկրի տարեկան պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Այն ժամանակամիջոցը, որի ընթացքում Երկիրը մեկ լրիվ պտույտ է կատարում իր առանցքի շուրջը, կոչվում է տարի:
- 2) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է արևմուտքից արևելք ուղղությամբ:
- 3) Երկիրը հեռակետում գտնվում է հունվարի 3-ին և Արեգակից հեռացած է 147 մլն կմ:
- 4) Տարվա եղանակների առաջացման և հերթափոխի գլխավոր պատճառներն են Երկրի պտույտն Արեգակի շուրջը, գնդաձևությունը և առանցքի թեքությունը, որը կազմում է $66^\circ 30'$:
- 5) 2034 թվականը նահանջ տարի է:
- 6) Երկիրն Արեգակի շուրջը պտտվում է 365 օր 6 ժամում:

15. Երկրի տարեկան պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Չորս տարին մեկ փետրվարն ունենում է 28 օր:
- 2) Ուղեծիրը Երկրի պտույտի ճանապարհն է Արեգակի շուրջը:
- 3) Հյուսիսային կիսագնդում գիշերվա ամենաերկար տևողությունը դիտվում է հունիսի 22-ին:
- 4) Հյուսիսային արևադարձի վրա ցերեկվա ամենաերկար տևողությունը դիտվում է սեպտեմբերի 23-ին և մարտի 21-ին:
- 5) Հյուսիսային կիսագնդում աշնանային գիշերահավասարի օրը մարտի 21-ին է:
- 6) Հարավային կիսագնդում ամենաերկար ցերեկը դիտվում է դեկտեմբերի 22-ին:

16. Երկրի տարեկան պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հունիսին առավելագույն ջերմություն ստանում են հարավային կիսագնդի արևադարձային լայնությունները:
- 2) Բևեռային շրջագծերի վրա բևեռային գիշերների տևողությունը հասնում է 6 ամսվա:
- 3) Հարավային լայնության $66^{\circ}30'$ զուգահեռականի վրա բևեռային գիշեր լինում է հունիսի 22-ին:
- 4) Սեպտեմբերի 23-ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց ընկնում են հարավային արևադարձի վրա:
- 5) Բևեռային գիշերների տևողությունը բևեռներում հասնում է 6 ամսվա: +
- 6) Երկիրը հեռակետում լինում է հուլիսի 5-ին և Արեգակից հեռու է 152 մլն կմ:

17. Երկրի տարեկան պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հունիսի 22-ին հյուսիսային բևեռային շրջագծի վրա 1 օր լինում է բևեռային ցերեկ:
- 2) Հարավային բևեռային շրջագծի վրա բևեռային գիշեր է լինում հունիսի 22-ին:
- 3) Հյուսիսային լայնության 45° -ի վրա Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում մարտի 21-ին:
- 4) Հասարակածի վրա Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում դեկտեմբերի 22-ին և հունիսի 22-ին:
- 5) Արեգակի ճառագայթների անկման անկյունը Հյուսիսային բևեռում հունիսի 22-ի կեսօրին կազմում է $23^{\circ}30'$:
- 6) Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում սեպտեմբերի 23-ի կեսօրին կազմում է 40° :

18. Երկրի տարեկան պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ամառային արևակայության օրը Արեգակի ճառագայթները կեսօրին ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:
- 2) Հունիսի 22-ին ցերեկն ավելի երկար է հյուսիսային բևեռային շրջագծի վրա, քան Երևանում:
- 3) Հարավային բևեռային շրջագծի վրա ձմեռային արևակայության օրը բևեռային ցերեկ է լինում:
- 4) Բևեռային ցերեկների տևողությունը բևեռային շրջագծերի վրա 6 ամիս է:
- 5) Հասարակածի վրա Արեգակի ճառագայթները ուղղահայաց են ընկնում հունիսի 22-ին և դեկտեմբերի 22-ին:
- 6) Արեգակի ճառագայթների անկման անկյունը Երևանում սեպտեմբերի 23-ի կեսօրին կազմում է $23,5^{\circ}$:

19. Երկրի տարեկան պտույտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք սխալ.

- 1) Ձմեռային արևակայության օրը Արեգակի ճառագայթները կեսօրին ուղղահայաց են ընկնում հարավային արևադարձի վրա:
- 2) Հյուսիսային բևեռային շրջագծի վրա բևեռային ցերեկ լինում է գարնանային գիշերահավասարի օրը:
- 3) Հասարակածի վրա Արեգակի ճառագայթները կեսօրին ուղղահայաց են ընկնում մարտի 21-ին և հունիսի 22-ին:
- 4) Աշնանային գիշերահավասարի օրը լույսը մթից բաժանող սահմանագիծն անցնում է բևեռներով:
- 5) Արեգակի ճառագայթների անկման անկյունը հյուսիսային բևեռային շրջագծի վրա հունիսի 22-ի կեսօրին կազմում է 90°:
- 6) Սեպտեմբերի 23-ին առավելագույն ջերմություն ստանում են Երկրագնդի հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնությունները:

20. Երկրակեղևի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրակեղևը Երկրագնդի ամենավերին և ամենաբարակ շերտն է:
- 2) Մայրցամաքային երկրակեղևը օվկիանոսայինից խիտ է:
- 3) Տարբերում են երկրակեղևի երկու տիպ՝ մայրցամաքային և օվկիանոսային:
- 4) Երկրակեղևի մայրցամաքային տիպը բարակ է և երկշերտ:
- 5) Երկրակեղևի արտաքին շերտը կազմված է նստվածքային, դրանց տակ՝ բազալտային, իսկ խորքում՝ գրանիտային ապարաշերտերից:
- 6) Երկրակեղևի տակ միջնապատյանն է՝ մինչև 2900 կմ խորությամբ, որը կազմված է ավելի ծանր նյութերից:

21. Երկրագնդի ներքին կառուցվածքի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրակեղևը, Երկրի ներքին ոլորտների հետ համեմատած, կազմված է համեմատաբար թեթև նյութերից:
- 2) Երկրակեղևի օվկիանոսային տիպը երկշերտ է ու բարակ:
- 3) Երկրակեղևի օվկիանոսային տիպը բաղկացած է նստվածքային և դրա տակ տարածվող գրանիտային ապարաշերտերից:
- 4) Երկրի միջուկը խիտ է՝ կազմված նիկելի և երկաթի խառնուրդից:
- 5) Քարոլորտից դեպի Երկրի խորքը ջերմաստիճանն իջնում է:
- 6) Քարոլորտի սալերը, շարժվելով ասթենոսֆերայի վրայով, որոշ տեղերում մոտենում են իրար՝ առաջացնելով հարթավայրեր:

22. Երկրակեղևի ապարների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ըստ ծագման՝ ապարները բաժանվում են երկու խմբի՝ հրային և նստվածքային:
- 2) Երկրի ընդերքից դուրս եկած հրահեղուկ զանգվածից առաջացած ապարները կոչվում են մագմային:
- 3) Գրանիտը երկրակեղևի խորքում առաջացած ապար է:
- 4) Մարմարը, կվարցը և գնեյսը նստվածքային ծագման ապարներ են:
- 5) Օրգանական ծագման նստվածքային ապարները գոյանում են օդի ջերմաստիճանի, ջրի, քանու և օրգանիզմների ազդեցությամբ ապարների ազդեցությամբ:
- 6) Խարամը, պեմզան և օբսիդիանը հրային ծագման ապարներ են:

23. Երկրակեղևի շարժումների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրակեղևի կարծր, կայուն, համեմատաբար հարթ մակերևույթով ընդարձակ տեղամասերը կոչվում են պլատֆորմներ:
- 2) Երկու կողմից խզված և երկրակեղևի բարձրացած տեղամասը կոչվում է գրաբեն:
- 3) Երկու կողմից խզված և երկրակեղևի իջած տեղամասը կոչվում է հորստ:
- 4) Երկրակեղևի անկայուն, խզված, անհարթ մակերևույթով ընդարձակ շարժունակ տեղամասերը կոչվում են գեոսինկլինալներ:
- 5) Գրաբենային ծագում ունի աշխարհի ամենախորը լիճը՝ Կասպիցը, որի խորությունը 1620 մ է:
- 6) Գեոսինկլինալներն ունեն հարթ մակերևույթ և զբաղեցնում են փոքր տարածք:

24. Հրաբուխների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Արեգակի էներգիայով պայմանավորված՝ Երկրի մակերևույթը փոփոխող ուժերը կոչվում են ներծին:
- 2) Երկրի ներքին էներգիայով է պայմանավորված հոսող ջրերի, քանու, սառցադաշտերի, ջրային ալիքների, օրգանիզմների ներգործությունը Երկրի մակերևույթի վրա:
- 3) Երկրի խորքից մագմայի, ջրային գոլորշիների և գազերի դուրս մղումը Երկրի մակերևույթ կոչվում է հրաբխի ժայթքում:
- 4) Այն ուղին, որով բարձրանում է մագման, կոչվում է հրաբխի խառնարան:
- 5) Դուրս ժայթքած լավան, որը կորցնում է ջրային գոլորշիներն ու գազերը, կոչվում է մագմա:
- 6) Հայկական լեռնաշխարհի գործող հրաբուխներից են Նեմրուզը և Թոնդրակը:

25. Հրաբուխների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Դուրս ժայթքած մագման, որը կորցնում է ջրային գոլորշիներն ու գազերը, կոչվում է լավա:
- 2) Գործող հրաբուխները գտնվում են երկրակեղևի այն տեղամասերում, որտեղ շարունակվում են լեռնակազմական պրոցեսները:
- 3) Այն ուղի, որով բարձրանում է մագման, կոչվում է հրաբխի մղանցք:
- 4) Կամչատկա թերակղզում է աշխարհի գործող հրաբուխներից մեկը՝ Էլբրուսը:
- 5) Երկրի խորքում այն տեղը, որտեղ գոյանում է մագման, կոչվում է հրաբխի խառնարան:
- 6) Գործող հրաբուխների շրջանում հաճախ հանդիպում են պարբերաբար տաք ջուր և գոլորշի, շատրվանող աղբյուրներ, որոնք կոչվում են գեյզերներ:

26. Երկրաշարժերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրի մակերևույթի վրա այն տեղը, որը գտնվում է երկրաշարժի օջախի վերևում կոչվում է հիպոկենտրոն:
- 2) Երկրակեղևում ապարաշերտերի կտրուկ տեղաշարժերի հետևանքով առաջացած ցնցումները և Երկրի մակերևույթի տատանումները կոչվում են երկրաշարժեր:
- 3) 1-2 բալ ուժգնության երկրաշարժը մարդիկ չեն զգում, դրանք գրանցվում են շատ զգայուն հատուկ սարքերով, որոնք կոչվում են սեյսմոգրաֆներ:
- 4) Օվկիանոսների հատակում տեղի ունեցող երկրաշարժերից առաջանում են ջրի ցնցումներ և տոռնադո կոչվող կործանիչ ալիքներ:
- 5) Երկրի խորքում այն տեղը, որտեղ ապարաշերտերը կտրուկ տեղաշարժվում են, կոչվում է երկրաշարժի օջախ:
- 6) 4-5 բալ ուժգնության երկրաշարժերը կոչվում են աղետաբեր:

27. Երկրի մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրի մակերևույթի անհարթությունների ամբողջությունը կոչվում է ռելիեֆ:
- 2) Երկրի ներքին ուժերից են Արեգակի էներգիան, սառցադաշտերը, քամին, ծովային ալիքները:
- 3) 200-500 մ բացարձակ բարձրությամբ հարթավայրերը կոչվում են սարահարթեր:
- 4) Դաշտավայրն այն հարթավայրն է, որն ունի մինչև 200 մ բացարձակ բարձրություն:
- 5) Հայաստանում հարթավայրն ընդունված է անվանել դաշտավայր, օրինակ՝ Արարատյան, Շիրակի:
- 6) 500 մ-ից ավելի բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրերը կոչվում են բարձրավայրեր:

28. Երկրի մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրի մակերևույթի այն ձևերը, որոնք ունեն պարզ արտահայտված ստորոտ, լանջ, գագաթ և մինչև 200 մ հարաբերական բարձրություն, կոչվում են լեռներ:
- 2) Լեռների սրածայր գագաթները կոչվում են պիկեր:
- 3) Լեռների կատարների միջև եղած ցածր տեղամասերը կոչվում են լեռնահովիտներ:
- 4) Հարևան լեռնաշղթաների միջև ընկած գոգավոր տեղամասերը կոչվում են լեռնանցքներ:
- 5) Տվյալ կետի ուղղաձիգ բարձրությունը օվկիանոսի մակարդակից կոչվում է հարաբերական բարձրություն:
- 6) Հին լեռները ցածր են, չունեն սրածայր գագաթներ ու զառիթափ լանջեր:

29. Երկրի մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երիտասարդ լեռները, սովորաբար, ունեն մեծ բարձրություն, կատարները սրածայր են, լանջերը՝ զառիթափ:
- 2) Մինչև 200 մ բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրերը կոչվում են դաշտավայրեր:
- 3) Միջին բարձրության լեռներն ունեն 1000–2500 մ բացարձակ բարձրություն:
- 4) Ցամաքի երկու կետերի բարձրությունների տարբերությունը ուղղաձիգ գծով կոչվում է բացարձակ բարձրություն:
- 5) Ֆիզիկական քարտեզներում լեռները պատկերվում են կանաչ գույնի տարբեր քանակներով. որքան լեռը բարձր է, այնքան գույնը մուգ է:
- 6) Մեծ մասամբ լեռները խումբ են կազմում, միանում են իրար՝ առաջացնելով շղթայաձև շարքեր, որոնք կոչվում են լեռնաշղթաներ:

30. Հողմահարման վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Արտածին ուժերի ազդեցությամբ Երկրի մակերևութային ապարների քայքայման, մանրացման և վերափոխման երևույթը կոչվում է հողմահարում:
- 2) Քիմիական հողմահարման ժամանակ ապարների խոշոր զանգվածները քայքայվում, մանրացվում, վերածվում են մանր բեկորների, բայց հատկանիշները չեն փոխվում:
- 3) Օրգանական հողմահարման ժամանակ ապարների քայքայումը տեղի է ունենում տարբեր գազերի, ջրային լուծույթների ազդեցությամբ:
- 4) Ֆիզիկական հողմահարումը տեղի է ունենում բույսերի և կենդանիների ներգործությամբ:
- 5) Կիսալուսնաձև ավազաթմբերն անվանում են բարխաններ:
- 6) Զրի քայքայիչ աշխատանքի հետևանքով առաջանում են դյուններ:

31. Մթնոլորտի կազմի և կառուցվածքի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Վերնոլորտը մթնոլորտի ամենաբարձր շերտն է:
- 2) Օդի զանգվածն ըստ բարձրության նվազում է:
- 3) Վերնոլորտն ամբողջությամբ մտնում է աշխարհագրական թաղանթի մեջ:
- 4) Մթնոլորտի 78%-ը կազմում է թթվածինը, 21%-ը՝ ազոտը:
- 5) Վերնոլորտում՝ մոտ 25-30 կմ բարձրություններում օզոն գազի շերտն է:
- 6) Ներքնոլորտում է կենտրոնացած մթնոլորտի ամբողջ զանգվածի մոտ 80%-ը, օդում եղած ջրային գոլորշիները:

32. Մթնոլորտի ջերմային պայմանների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Ներքնոլորտը տաքանում է Երկրի մակերևույթից, և յուրաքանչյուր մեկ կիլոմետր բարձրանալիս ջերմաստիճանը նվազում է 5° - 6° -ով:
- 2) Անամպ օրերին օդի ամենացածր ջերմաստիճանը լինում է կեսգիշերին:
- 3) Տարվա ընթացքում օդի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կոչվում է օդի տարեկան միջին ջերմաստիճան:
- 4) Անամպ օրերին օդի ամենաբարձր ջերմաստիճանը լինում է կեսօրից 2-3 ժամ հետո:
- 5) Ջերմաստիճանի փոփոխությունն օրվա ընթացքում կոչվում է օդի ջերմաստիճանի օրական ընթացք:
- 6) Ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը օրվա ընթացքում չափումներից ստացված ցուցանիշների միջին թվաբանականն է:

33. Մթնոլորտի ջերմային պայմանների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Ձմռան ամիսներին, երբ Արեգակը հորիզոնի նկատմամբ ամենաբարձր դիրքում է, և ցերեկները կարճ են, Երկրի մակերևույթը քիչ ջերմություն է ստանում:
- 2) Օրվա ընթացքում առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կոչվում է ջերմաստիճանի տատանման օրական լայնույթ:
- 3) Ամենուրեք օդի ամենացածր ջերմաստիճանը անամպ օրերին լինում է արևածագի պահին:
- 4) Օդի ջերմաստիճանի տարեկան տատանումները հիմնականում կախված են տվյալ վայրի աշխարհագրական լայնությունից:
- 5) Ներքնոլորտում յուրաքանչյուր մեկ կիլոմետր իջնելիս օդի ջերմաստիճանը նվազում է 5° - 6° -ով:
- 6) Օդի տարեկան միջին ջերմաստիճանը որոշում են տարվա ընթացքում առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությամբ:

34. Մթնոլորտի ջերմային պայմանների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ձմռանը Արեգակը հորիզոնից շատ չի բարձրանում, գիշերները երկար են, օդը քիչ է տաքանում, այդ պատճառով էլ ցուրտ է լինում:
- 2) Տարվա ընթացքում օդի առավելագույն և նվազագույն ջերմաստիճանների տարբերությունը կոչվում է ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթ:
- 3) Կլիմայական քարտեզների վրա տարված գծերը, որոնք միացնում են նույն ջերմաստիճանն ունեցող վայրերը, կոչվում են իզոթաթևեր:
- 4) Ջերմային ցուրտ գոտիները հյուսիսային և հարավային արևադարձերի միջև են:
- 5) Աշխարհագրական լայնության մեծացմանը զուգընթաց մեծանում է Արեգակի ճառագայթների անկման անկյունը:
- 6) Բարեխառն ջերմային գոտում տարվա բոլոր չորս եղանակներն էլ ցայտուն են արտահայտված:

35. Մթնոլորտային ճնշման վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Օդի ճնշումը չափում են հողմացույց (ֆլյուգեր) կոչվող սարքի միջոցով:
- 2) Այն ուժը, որով մթնոլորտը ճնշում է Երկրի մակերևույթի և նրա վրա գտնվող առարկաների վրա, կոչվում է մթնոլորտային ճնշում:
- 3) Վեր բարձրանալիս մթնոլորտային ճնշումը նվազում է:
- 4) Օդի ջերմաստիճանի բարձրացումից մթնոլորտային ճնշումը ավելանում է:
- 5) Քարտեզի վրա հավասար ճնշում ունեցող կետերը միացնող գծերը կոչվում են իզոթաթևեր:
- 6) Մթնոլորտային նորմալ ճնշումը հավասար է 760 մմ սնդիկի սյան:

36. Քամիների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Օդի շարժումը հորիզոնական ուղղությամբ մթնոլորտային ցածր ճնշման վայրից դեպի բարձր ճնշման վայր, կոչվում է քամի:
- 2) Մուսսոնները ձմռանը փչում են ծովից դեպի ցամաք, ամռանը՝ ցամաքից դեպի ծով:
- 3) Ցիկլոնը մթնոլորտային ցածր ճնշման մարզ է, որի կենտրոնում ճնշումն ավելի ցածր է, քան ծայրամասերում:
- 4) Ցերեկային բրիզը փչում է ցամաքից դեպի ջրավազան:
- 5) Հարավային կիսագնդում անտիցիկլոնի պտույտը ժամացույցի սլաքի շարժման ընթացքին հակառակ է:
- 6) Օրվա ընթացքում երկու անգամ ուղղությունը պարբերաբար փոխող քամին կոչվում է մուսսոն:

37. Քամիների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մուսսոնները ամռանը փչում են ցամաքից դեպի ծով, ձմռանը՝ ծովից դեպի ցամաք:
- 2) Օդի շարժումը հորիզոնական ուղղությամբ մթնոլորտային բարձր ճնշման վայրից դեպի ցածր ճնշման վայր, կոչվում է քամի:
- 3) Անտիցիկլոնը մթնոլորտային բարձր ճնշման մարզ է, որի կենտրոնում ճնշումն ավելի բարձր է, քան ծայրամասերում:
- 4) Գիշերային բրիզը փչում է ջրից դեպի ցամաք:
- 5) Հյուսիսային կիսագնդում ցիկլոնի պտույտը ժամացույցի սլաքի շարժման ընթացքին հակառակ է:
- 6) Տարվա ընթացքում երկու անգամ ուղղությունը պարբերաբար փոխող քամին կոչվում է պասսատ:

38. Քամիների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Լեռնահովտային քամիներն առաջանում են լեռների և հովիտների միջև:
- 2) Պասսատները հասարակածից դեպի արևադարձեր փչող քամիներն են:
- 3) Հյուսիսային կիսագնդում անտիցիկլոնի պտույտը ժամացույցի սլաքի շարժման ընթացքին հակառակ է, իսկ ցիկլոնինը՝ ժամացույցի սլաքի ընթացքի ուղղությամբ:
- 4) Ձմռանը մուսսոնները փչում են ցամաքից դեպի ծով, ամռանը՝ ծովից դեպի ցամաք:
- 5) Ցերեկը բրիզը փչում է ջրից դեպի ցամաք, գիշերը՝ ցամաքից դեպի ջուր:
- 6) Լեռնահովտային քամիները ցերեկը փչում են լեռներից դեպի հովիտները, իսկ գիշերը՝ հովիտներից դեպի լեռները:

39. Քամիների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Քամու ուղղությունը որոշում են հորիզոնի կողմերով և անվանում են հորիզոնի այն կողմի անունով, դեպի ուր այն փչում է:
- 2) Օդի շարժումը հորիզոնական ուղղությամբ մթնոլորտային բարձր ճնշման վայրից դեպի ցածր ճնշման վայր կոչվում է քամի:
- 3) Քամու արագությունը կախված է նրա ուժից:
- 4) Քամու արագությունը չափում են ճնշաչափ կոչվող սարքով:
- 5) Քամու ուղղությունն ու ուժը որոշում են հողմացույց (ֆյուլգեր) կոչվող սարքով:
- 6) Հողմացույցի սլաքի սուր ծայրը միշտ ուղղված է լինում քամու դեմ, այսինքն՝ դեպի հորիզոնի այն կողմը, որտեղից փչում է քամին:

40. Մթնոլորտում ջրային գոլորշիների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Օդերևութաբանական կայաններում օդի հարաբերական խոնավությունը չափում են խոնավաչափներով և խոնավագիրներով:
- 2) Օդի հարաբերական խոնավությունն արտահայտում են տոկոսներով:
- 3) Օդի բացարձակ խոնավությունը հարաբերական խոնավության հարաբերությունն է խոնավության այն քանակին, որն անհրաժեշտ է տվյալ ջերմաստիճանում օդը հագեցնելու համար:
- 4) Որքան բարձր է օդի ջերմաստիճանը, այնքան քիչ ջրային գոլորշիներ են անհրաժեշտ այն հանգեցնելու համար:
- 5) Օդի ջերմաստիճանն ինչքան բարձր լինի, այնքան շատ ջրային գոլորշիներ կպարունակվեն նրա մեջ:
- 6) Մեկ խորանարդ մետր օդում պարունակվող գոլորշիների քանակն՝ արտահայտված գրամներով, կոչվում է հարաբերական խոնավություն:

41. Մթնոլորտում ջրային գոլորշիների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Ամպամած օրերին, սովորաբար, գիշերն ավելի տաք է, քան պարզկա օրերին:
- 2) Շերտավոր ամպերն առաջացնում են տեղատարափ անձրև և կարկուտ:
- 3) Մթնոլորտի՝ Երկրի մակերևույթից բարձր շերտերում ջրային մանր կաթիլների կամ սառցաբյուրեղների կուտակումները կոչվում են ամպեր:
- 4) Ամպամած օրերին ձմռան ցերեկը, սովորաբար, ավելի ցուրտ է, քան պարզկա օրերին:
- 5) Մթնոլորտի երկրամերձ շերտում ջրային մանրագույն կաթիլների կուտակումը կոչվում է մառախուղ:
- 6) Փետրավոր ամպերից առաջանում է մանրամաղ, երկարատև անձրև կամ ձյուն:

42. Մթնոլորտում ջրային գոլորշիների վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Փետրավոր ամպերն ամենաբարձր և ամենաբարակ ամպերն են և տեղումներ չեն առաջացնում:
- 2) Ցողը բույսերի և այլ առարկաների վրա սառցե բյուրեղիկների՝ ձյան նմանվող նստվածքն է:
- 3) Կարկուտն առաջանում է տարվա ցուրտ եղանակներին:
- 4) Մթնոլորտից Երկրի վրա հեղուկ կամ պինդ վիճակով թափվող ջուրն անվանում են մթնոլորտային տեղումներ:
- 5) Տեղումների քանակն արտահայտում են տոկոսներով:
- 6) Եղյամը բույսերի և այլ առարկաների վրա ջրային մանր կաթիլների նստվածքն է:

43. Մթնոլորտում ջրային գոլորշիների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրագնդի վրա մթնոլորտային տեղումներ ամենից շատ թափվում են արևադարձային շրջաններում, որովհետև այդտեղ ջերմաստիճանները շատ բարձր են:
- 2) Ցողն առաջանում է տարվա ցուրտ, անհողմ եղանակներին, պարզկա գիշերներին:
- 3) Երկնքի՝ ամպերով ծածկվածության աստիճանը կոչվում է ամպամածություն:
- 4) Մթնոլորտային տեղումներն առատ են լեռների՝ դեպի օվկիանոսն ուղղված լանջերին:
- 5) Կարկուտն առաջանում է տարվա տաք եղանակներին: +
- 6) Ելյամն առաջանում է տարվա տաք եղանակներին, պարզկա գիշերներին, անհողմ օրերին:

44. Եղանակի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ներքնոլորտի ստորին շերտի վիճակը տվյալ վայրում և տվյալ պահին կոչվում է եղանակ:
- 2) Բևեռային շրջաններում ձյան և սառույցի վրա ձևավորված օդը սառն է ու խոնավ, մթնոլորտային ճնշումը՝ ցածր:
- 3) Եղանակի կանխատեսումներն անհրաժեշտ են օդաչուններին և տիեզերագնացներին:
- 4) Տվյալ վայրի եղանակի օրական փոփոխություններն ամենից առաջ պայմանավորված են հորիզոնի նկատմամբ Արեգակի բարձրության փոփոխությամբ:
- 5) Եղանակաստեղծ հիմնական տարրերն են օդի ջերմաստիճանը, ճնշումը և խոնավությունը:
- 6) Ներքնոլորտի օդի միատեսակ ֆիզիկական հատկանիշներ ունեցող ծավալուն մասը, որը զոյանում է միասեռ ընդարձակ տարածքի վրա, կոչվում է օդային զանգված:

45. Զրոլորտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրագնդի ջրային տարածքը 149 մլն կմ² է:
- 2) Զրոլորտի բաղադրամասերը երեքն են՝ համաշխարհային օվկիանոսի, ցամաքի և մթնոլորտի ջրերը:
- 3) Զրոլորտի ջրի մոտ 96%-ը կազմում են օվկիանոսների և ծովերի աղի ջրերը:
- 4) Համաշխարհային օվկիանոսը զբաղեցնում է Երկրի ամբողջ տարածքի 1/3-ը կամ 29%-ը:
- 5) Առանձնացնում են ջրի փոքր (տեղական) և մեծ (համաշխարհային) շրջապտույտներ:
- 6) Զուրն արագ տաքանում է և արագ էլ՝ սառչում, իսկ ցամաքը դանդաղ տաքանում է և դանդաղ սառչում:

46. Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մայրցամաքների և կղզիների ափերը ողողող միասնական, ընդարձակ ջրային տարածքը կոչվում է ծով:
- 2) Օվկիանոսներից ամենամեծը Ատլանտյանն է, որն ունի 76 մլն կմ² մակերես:
- 3) Համաշխարհային օվկիանոսի մասերն են ծովերը, ծովածոցերը և նեղուցները:
- 4) Օվկիանոսի առափնյա գոտում մինչև 200 մետր խորությամբ տեղամասը կոչվում է մայրցամաքային ծանծաղուտ:
- 5) Կարիբյանը համարվում է ներքին ծով:
- 6) Օվկիանոսի ջրի միջին աղիությունը 35 ‰ է:

47. Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ծովերն ըստ տեղադիրքի լինում են ներքին, արտաքին և միջկղզային:
- 2) Օվկիանոսում 200-2500 մ խորությունները անվանում են օվկիանոսի հատակ:
- 3) Նեղուցը երկու ջրային ավազաններն իրար միացնող ջրային նեղ ուղին է:
- 4) Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսներն իրար միանում են Բերինգի նեղուցով:
- 5) Միջերկրականը արտաքին ծով է, քանի որ նեղուցներով միացած է Սև և Ազովի ծովերին:
- 6) Համաշխարհային օվկիանոսում ամենատաքը և ամենաաղին Կարմիր ծովն է:

48. Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մայրցամաքային ծագման կղզիներն անջատվել են մայրցամաքներից՝ ցամաքի իջեցման հետևանքով:
- 2) Համաշխարհային օվկիանոսի խորությունը չափում են էխուլոտ (ձայնային խորաչափ) կոչվող սարքով:
- 3) Կորալյան (օրգանական) ծագման կղզիներն առաջացել են բույսերի փտումից, նեխումից:
- 4) Համաշխարհային օվկիանոսի ջրում լուծված են 40-ից ավելի նյութեր, որոնցից գերակշռողը մագնեզիումի քլորիդն է (78%), որը ջրին տալիս է աղի համ:
- 5) Քաղցրահամ ջուրը սառչում է 0°C-ում, իսկ օվկիանոսի աղի ջուրը՝ -1-2°C-ում:
- 6) Օվկիանոսի ջրի մեծ աղիությունը պայմանավորված է փոքր գոլորշացումով, մթնոլորտային առատ տեղումներով և գետերի բերած քաղցրահամ ջրի մեծ քանակով:

49. Օվկիանոսային հոսանքների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Օվկիանոսային հոսանքներն առաջանում են օվկիանոսի հատակում տեղի ունեցող երկրաշարժերից:
- 2) Օվկիանոսային ջրի հսկայական զանգվածների հորիզոնական տեղափոխությունը կոչվում է օվկիանոսային հոսանք:
- 3) Օվկիանոսային հոսանքների առաջացման հիմնական պատճառը մշտական ուղղություն ունեցող քամիներն են:
- 4) Օվկիանոսային հոսանքների ուղղության վրա մեծ ազդեցություն է գործում Երկրի օրական պտույտի հետևանքով առաջացող Կորիոլիսի ուժը: +
- 5) Օվկիանոսային տաք հոսանքները ցամաքի առափնյա շրջաններում առաջացնում են օդի չորություն:
- 6) Ատլանտյան օվկիանոսում հայտնի են Կուրո Սիո և Արևելաամստրալական տաք հոսանքները:

50. Ստորերկրյա ջրերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Այն ապարները, որոնց միջով ջուրը հեշտ է ներծծվում, կոչվում են ջրամերժ:
- 2) Առաջին ջրամերժ շերտի վրա կուտակված ջրերն անվանում են գրունտային ջրեր:
- 3) Ստորերկրյա ջրերի բնական ելքը Երկրի մակերևույթի վրա կոչվում է գեյզեր:
- 4) Պարբերաբար տաք ջուր և գոլորշի շատրվանող աղբյուրները կոչվում են գեյզերներ:
- 5) Լեռնային երկրներում, որտեղ ջրատար շերտերը գոգավոր են, միջջերտային ջրերը դառնում են ճնշումային:
- 6) Կավը, գրանիտը ջրաթափանց ապարներ են:

51. Գետերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Այն տեղը, որտեղից սկիզբ է առնում գետը, կոչվում է գետաբերան:
- 2) Գետահովտի ամենացածր մասը, որը միշտ ծածկված է ջրով, կոչվում է ողողատ:
- 3) Գետի թեքությունը նրա անկման հարաբերությունն է երկարությանը:
- 4) Որքան փոքր լինեն գետի անկումն ու թեքությունը, այնքան մեծ կլինի նրա էներգետիկ կարողությունը:
- 5) Յանգզի և Հուանհե գետերը հորդանում են ամռանը՝ մուսսոնային անձրևաջրերից:
- 6) Միջերկրածովային կլիմա ունեցող շրջաններում գետերը հորդանում են ձմռանը:

52. Գետերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ըստ սնման աղբյուրների՝ գետերը լինում են անձրևային, ստորերկրյա, ձնային և սառցադաշտային:
- 2) Ստորերկրյա սնում ունեն հիմնականում բարեխառն գոտու գետերը:
- 3) Անգարան, Սուրբ Լավրենտիոսը, Նեղոսը, Հրազդանն ունեն լճային սնում:
- 4) Տարվա ընթացքում գետի հոսքի փոփոխություններն անվանում են ծախս:
- 5) Գետի հոսքը լայնակի կտրվածքով մեկ վայրկյանում անցած ջրի քանակն է:
- 6) Լայնակի կտրվածքը գետի լայնության և միջին խորության արտադրյալն է:

53. Լճերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Լավային հոսքից կամ լեռնալանջի փլուզումից գետի հունը փակվելու հետևանքով առաջացած լիճը կոչվում է հնահունային ծագման:
- 2) Երկրագնդի ամենախորը լիճը Տանգանիկան է:
- 3) Երկրագնդի խոշոր լճերի մեջ ամենաբարձրը Տիտիկական է:
- 4) Տարվա ընթացքում Չադ և Էյր լճերի մակերեսը զգալիորեն փոխվում է:
- 5) Արևելաաֆրիկական Մեծ բեկվածքում գտնվող Աթաբասկա լիճն ունի տեկտոնական ծագում:
- 6) Մեծ Արջի, Վեներն և Վետերն լճերն ունեն սառցադաշտային ծագում:

54. Սառցադաշտերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մթնոլորտային պինդ տեղումների բազմամյա կուտակումից առաջացած սառցի զանգվածը կոչվում է այսբերգ:
- 2) Այն բարձրությունը, որից վեր ձյունը չի հալվում, և առաջանում է սառցադաշտ, կոչվում է ձյան գիծ:
- 3) Հայկական լեռնաշխարհում ձյան գիծը 5000 մ բարձրության վրա է:
- 4) Այսբերգների 3/4 մասը լինում է ջրից դուրս, իսկ 1/4-ը՝ ջրի մեջ:
- 5) Սառցադաշտերը լինում են երկու տեսակի՝ մայրցամաքային (ծածկույթային) և լեռնահովտային: +
- 6) Լեռնային սառցադաշտերը մեծ տարածում ունեն Ալյասկայում, Կորդիլիերներում, Ալպերում, Պամիրում, Սկանդինավյան լեռներում:

55. Կենսոլորտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Կենդանի օրգանիզմներով բնակեցված Երկրի ոլորտը և նրանց ապրելու միջավայրը կոչվում է կենսոլորտ:
- 2) Առաջին կենդանի էակները Երկրի վրա առաջացել են ցամաքի վրա, իսկ հետո անցել են ջրի մեջ:
- 3) Կենսոլորտն ընդգրկում է քարոլորտի վերին և մթնոլորտի ստորին շերտերն ու ամբողջ ջրոլորտը:

- 4) Հողառաջացման գործոններ են համարվում մայր ապարը, ջուրը, կլիման, բույսը, կենդանին, ինչպես նաև մարդը:
- 5) Հումուսն առաջանում է անօրգանական միացությունների (կավ, ավազ) մնացորդների քայքայումից:
- 6) Ամենաբերրի հողերը անտառային գորշահողերն են:

56. Բնական զոնաների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխարհագրական գոտին բնական զոնայի մի մասն է:
- 2) Բնական զոնաների հերթափոխը լեռներում կոչվում է վերընթաց գոտիականություն:
- 3) Բառբարը և շշածառը տարածված են հասարակածային մշտադալար, խոնավ անտառների բնական զոնայում:
- 4) Շյուդախոտը, փետրախոտը և երեքնուկը բնորոշ են տափաստանների բնական զոնային:
- 5) Աֆրիկայում բացակայում է տափաստանների բնական զոնան:
- 6) Սևահողերը մեծ տարածում ունեն Ավստրալիայում:

57. Բնական զոնաների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բարեխառն գոտու փշատերև անտառների (տայգա) ենթազոնայում տարածված են կարմրագորշ հողերը:
- 2) Տունդրայի բնական զոնայում տեղումները քիչ են, օդի տարեկան միջին ջերմաստիճանները՝ ցածր, բուսականությունը՝ ցածրահասակ:
- 3) Հարավային Ամերիկայի մերձարևադարձային կլիմայական գոտում տարածվում է տայգան:
- 4) Տափաստանում ծառային բուսականությունը բացակայում է, քանի որ խոնավության քանակն անբավարար է:
- 5) Ավստրալիայում լայն տարածում ունեն անապատների և սավաննաների բնական զոնաները:
- 6) Կաղնին, հաճարենին, բոխին, շագանակենին տարածված են հասարակածային մշտադալար, խոնավ անտառների զոնայում:

58. Աշխարհագրական թաղանթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխարհագրական թաղանթը հանդիսանում է Երկրի ամենախոշոր բնատարածքային համալիրը, որը բաժանվում է ավելի փոքր բնական համալիրների:
- 2) Աշխարհագրական թաղանթը սահմաններով և ծավալով ավելի փոքր է, քան կենսոլորտը:

- 3) Աշխարհագրական թաղանթի մեջ մտնում են քարոլորտի վերին, մթնոլորտի ստորին շերտերը, ջրոլորտը, կենսոլորտը և մարդոլորտը ամբողջությամբ:
- 4) Աշխարհագրական թաղանթի ոլորտները և բաղադրամասերը սերտ կապերի ու փոխազդեցության մեջ են:
- 5) Աշխարհագրական թաղանթի կարևոր հատկանիշներից է կլիմայի խիստ ցամաքայնությունը:
- 6) Աշխարհագրական թաղանթի հզորությունը (հաստությունը) կազմում է մոտ 1000 կմ:

59. Աշխարհի քաղաքական քարտեզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևորագույն իրադարձություններից է Օսմանյան և Ռուսական կայսրությունների փլուզումը:
- 2) Տարածքի մեծությունը քաղաքաաշխարհագրական գործոն է:
- 3) Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունն է գաղութային համակարգի փլուզումը:
- 4) Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանն ընդգրկում է 16-19-րդ դարերը:
- 5) Գաղութային անցյալն ազդել է Աֆրիկայի երկրների սահմանների գծագրության ձևավորման վրա: +
- 6) Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման միջնադարյան փուլը կապված է կապիտալիստական դարաշրջանի հետ:

60. Աշխարհի քաղաքական քարտեզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի երրորդ փուլի կարևորագույն իրադարձությունը ԽՍՀՄ-ի փլուզումն է:
- 2) Աշխարհի պետությունների ճնշող մեծամասնությունը կառավարման ձևով հանրապետություններ են:
- 3) Սահմանադրական միապետություններում երկրի օրենսդիր և գործադիր իշխանությունների գործունեությունը իրականացնում է ընտրովի միապետը:
- 4) Կառավարման միապետական ձևը բնորոշ է միայն զարգացող երկրներին:
- 5) Նախագահական հանրապետություններում երկրի նախագահն ընտրվում է ոչ թե խորհրդարանի, այլ ժողովրդի կողմից:
- 6) Աշխարհի երկրների մեծ մասը պետական տարածքային կառուցվածքով դաշնային պետություններ են:

61. Աշխարհի բնակչության վերարտադրության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Զարգացած երկրներում ժողովրդագրական քաղաքականության հիմնական ուղղությունը ծնելիության կրճատումն է:
- 2) Զարգացող երկրներին բնորոշ է բնակչության բարձր ծնելիությունը, միջին մահացությունը և բարձր բնական աճը:
- 3) Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է երկրի պետական կառուցվածքով:
- 4) «Ժողովրդագրական ճգնաժամը» բնակչության թվի կայուն նվազումն է՝ նեղացված վերարտադրության պայմաններում:
- 5) «Ժողովրդագրական պայթյունը» բնակչության թվի կայունացումն է պարզ վերարտադրության պայմաններում:
- 6) Բնակչության վերարտադրության ամենաբարձր տեմպերը նկատվում են աֆրիկյան երկրներում:

62. Աշխարհի բնակչության տեղաբաշխման վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխարհի բնակչության խտությունը տեղանքի բարձրության մեծանալուն զուգընթաց նվազում է:
- 2) Աշխարհի բնակչության խտությունը ծովերից կամ օվկիանոսներից հեռանալուն զուգընթաց աճում է:
- 3) Աշխարհի առավել խիտ բնակեցված տարածաշրջաններից են Հյուսիսային Եվրոպան և Հարավարևմտյան Ասիան:
- 4) Ոռոգելի հողագործության շրջաններում մեծ է գյուղական բնակչության խտությունը:
- 5) Զարգացած վերամշակող արդյունաբերություն ունեցող տարածքներին բնորոշ է բնակչության մեծ խտությունը:
- 6) Տնտեսապես զարգացած բոլոր երկրները բնակչության բարձր խտություն ունեն:

63. Աշխարհի բնակչության սեռատարիքային կազմի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Զարգացած երկրների մեծ մասում բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ:
- 2) Աշխարհում տղաներ ավելի շատ են ծնվում, սակայն երկրների մեծ մասում գերակշռում են կանայք:
- 3) Զարգացած երկրներին բնորոշ է լայն հիմքով և նեղ գագաթով սեռատարիքային բուրգը:
- 4) Ցանկացած երկրի բնակչության սեռատարիքային կառուցվածքը կախված է բնակչության վերարտադրության բնույթից:

- 5) Զարգացող երկրների բնակչության տարիքային կառուցվածքում բարձր է երեխաների բաժինը, և ցածր է մեծահասակների բաժինը:
- 6) Միգրացիան որևէ ազդեցություն չի թողնում բնակչության սեռատարիքային կառուցվածքի վրա:

64. Աշխարհի բնակչության ռասայական կազմի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ռասաների բնութագրիչ հատկանիշերն են լեզուն, մշակույթը և կրոնը:
- 2) Ռասայական հատկանիշների ձևավորման վրա ավելի շատ ազդեցություն են թողել սոցիալ-տնտեսական և քաղաքական, քան բնական գործոնները:
- 3) Մոնղոլոիդ ռասային բնորոշ են դեղնավուն մաշկը, սև և ուղիղ մազերը, աչքերի նեղ բացվածքը:
- 4) Բնակչության ռասայական և ազգային կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
- 5) Ժամանակակից խառը ռասաների ներկայացուցիչները լայն տարածում ունեն Լատինական Ամերիկայում:
- 6) Նեգրոիդ մեծ ռասայի տարածման հիմնական շրջանը Հարավային Ասիան է:

65. Աշխարհի բնակչության ազգային կազմի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնակչության ազգային և կրոնական կազմերի սահմանները մշտապես համընկնում են:
- 2) Բնակչության ազգային և լեզվական կազմերը աշխարհի առանձին տարածաշրջաններում չեն համընկնում:
- 3) Ազգի հատկանիշներից են լեզվի, հոգևոր մշակույթի և հոգեբանական խառնվածքի ընդհանրությունը:
- 4) Ազգն ունի ազգությանը բնորոշ հատկանիշներ, սակայն սոցիալ-տնտեսական զարգացման ավելի ցածր աստիճանի վրա է, քան ազգությունը:
- 5) Այն երևույթը, երբ ամրապնդվում է ազգի լեզվական և մշակութային ընդհանրությունը, երբ ազգը դառնում է ավելի միասնական ու ամրակուռ, կոչվում է ազգերի միաձուլում:
- 6) Աշխարհում խոշորագույն լեզվաընտանիքը հնդեվրոպականն է:

66. Աշխարհի բնակչության միգրացիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնակչության վայրի ժամանակավոր կամ մշտական փոփոխության հետ կապված բնակչության տեղաշարժը կոչվում է տարաբնակեցում:
- 2) Բնակչության միգրացիան մեծ ազդեցություն է թողել ամբողջ աշխարհում տարբեր լեզուների և կրոնների տարածման վրա:

- 3) Բնակչության ամենօրյա տեղաշարժը մի բնակավայրից մեկ այլ բնակավայր աշխատանքի կամ ուսման նպատակով կոչվում է ճոճանակային միգրացիա:
- 4) Նախկինում արտագաղթած բնակչության միգրացիան կոչվում է սեզոնային միգրացիա:
- 5) Միգրացիայի հիմնական պատճառներն են բնականը և էկոլոգիականը:
- 6) Աշխարհում ամենամեծ թվով ներգաղթածներ ունեցող երկրներից են ԱՄՆ-ը և Կանադան:

67. Աշխարհի բնակչության տարաբնակեցման վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Որոշակի տարածքում բնակչության տեղաբաշխումն ըստ բնակավայրերի և դրանց համակարգերի կոչվում է բնակչության միջին խտություն:
- 2) Բնակավայրերը ոչ միայն մարդկանց բնակության, այլև արտադրական և ոչ արտադրական գործունեության կենտրոններ են:
- 3) Նստակյաց բնակչության շրջանում առանձնանում է տարաբնակեցման երկու հիմնական ձև՝ ցրված և խմբային:
- 4) Ցրված տարաբնակեցումը ներկայացված է գյուղական և քաղաքային բնակավայրերով և դրանց կուտակմամբ ձևավորված ագլոմերացիայով:
- 5) Խմբային տարաբնակեցումը տարածված է ագարակային (ֆերմերային) գյուղատնտեսություն ունեցող երկրներում (ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա և այլն):
- 6) Տարաբնակեցման վրա ազդող հիմնական և որոշիչ գործոնը տնտեսականն է՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, տրանսպորտը և սպասարկման ոլորտը:

68. Ուրբանիզացման վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Հասարակության մեջ քաղաքների դերի աճի, քաղաքականների թվի ավելացման և քաղաքային ապրելակերպի տարածման պատմական երևույթը կոչվում է ուրբանիզացիա:
- 2) Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը չի ազդում ուրբանիզացման մակարդակի վրա:
- 3) Վերջին տասնամյակներին ուրբանիզացման համար գլխավոր են դարձել արտադրական գործոնները:
- 4) Կեղծ ուրբանիզացիայի երևույթը բնորոշ է զարգացած երկրներին:
- 5) Չինաստանի և Հնդկաստանի ուրբանիզացման մակարդակները հասնում են մոտ 70-80%-ի:
- 6) Զարգացած երկրներում բարձր է ուրբանիզացման մակարդակը, ցածր են ուրբանիզացման տեմպերը:

69. Քաղաքների և քաղաքային ագլոմերացիաների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մարդկանց առաջին բնակավայրերը եղել են քաղաքային բնակավայրերը:
- 2) Բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը կոչվում է քաղաքային ագլոմերացիա:
- 3) Քաղաքային ագլոմերացիաների ընդարձակման և միաձուլման հետևանքով ձևավորված հզոր ու ընդարձակ ուրբանիզացված գոտին կոչվում է տեխնոպոլիս:
- 4) Սուբուրբանիզացիայի հետևանքով ձևավորվում են քաղաքային ագլոմերացիաներ և մեգալոպոլիսներ:
- 5) Քաղաքի գործառույթային կառուցվածքն ու մարդաշատությունը կախված չեն նրա տնտեսաաշխարհագրական դիրքից:
- 6) Աշխարհի խոշորագույն ագլոմերացիաներից են Տոկիոյի և Մեխիկոյի ագլոմերացիաները:

70. Համաշխարհային տնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Յուրաքանչյուր երկրում պատմականորեն ձևավորված հասարակական վերարտադրության համակարգը կոչվում է ազգային տնտեսություն:
- 2) Աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների և դրանց տնտեսական փոխադարձ կապերի ամբողջությունը կոչվում է համաշխարհային տնտեսություն:
- 3) Համաշխարհային տնտեսության ձևավորման երեք հիմնական նախադրյալներն են աշխարհագրական դիրքը, բնական ռեսուրսները և տրանսպորտը:
- 4) Համաշխարհային տնտեսությունը հաջորդաբար անցել է զարգացման արդյունաբերական, հետարդյունաբերական և ագրարային փուլեր:
- 5) Համաշխարհային տնտեսության տարածքային միավորները առանձին երկրներն ու տարածաշրջաններն են՝ յուրաքանչյուրն իր տնտեսությամբ:
- 6) Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքի ամենաերիտասարդ ոլորտն է արդյունաբերությունը:

71. Համաշխարհային տնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխատանքի աշխարհագրական բաժանումը տարածքների մասնագիտացման և մասնագիտացված ապրանքներով ու ծառայություններով փոխանակման գործընթացն է:
- 2) Աշխատանքի աշխարհագրական բաժանման բարձրագույն ձևը աշխատանքի միջազգային բաժանումն է:
- 3) Աշխատանքի աշխարհագրական միջազգային բաժանման բարձրագույն աստիճանը միջազգային տնտեսական միասնացումն է (ինտեգրացումը):

- 4) ԳՏՀ-ի շնորհիվ արտադրության տեղաբաշխման վրա բնական գործոնների ազդեցությունը սկսում է մեծանալ:
- 5) Գիտությունը և կրթությունը արտադրական ոլորտի ճյուղեր են:
- 6) Թուրքիան և Իրանը զարգացման հետարդյունաբերական փուլում են:

72. Բնական ռեսուրսների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնական պայմաններ են կոչվում բնության այն տարրերը, որոնք մարդկանց կողմից օգտագործվում են կամ կարող են օգտագործվել արտադրության ու սպառման համար:
- 2) Ռեսուրսապահովվածությունը բնական ռեսուրսների քանակի և օգտագործման չափերի հարաբերությունն է:
- 3) Բնական ռեսուրսների էկոլոգիական գնահատման ժամանակ հաշվի են առնում արտադրության մեջ դրանց օգտագործման նպատակահարմարությունն ու հնարավորությունը:
- 4) Բնական ռեսուրսները խմբավորում են ըստ որոշակի հատկանիշների՝ ծագման, վերականգնման հատկության, որակի:
- 5) Մետաղային և ոչմետաղային հանքային ռեսուրսները դասվում են վերականգնվող ռեսուրսների թվին:
- 6) Չսպառվող ռեսուրսների խմբին են դասվում հողային, անտառային և ջրային ռեսուրսները:

73. Աշխարհի արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Արդյունաբերությունը հին ճյուղ է և ձևավորվել է աշխատանքի առաջին հասարակական բաժանումից հետո:
- 2) Արդյունաբերության բուռն զարգացումը շարունակվում է նաև ներկայումս և հիմնականում հենվում է գիտատեխնիկական առաջընթացի վրա:
- 3) Արդի փուլում արդյունաբերության զարգացման և կառուցվածքային տեղաշարժերի վրա ԳՏՀ-ն մեծ ազդեցություն չի թողնում:
- 4) Աճի համեմատաբար բարձր տեմպերի շնորհիվ արդյունաբերության ընդհանուր ծավալում մշակող արդյունաբերության բաժինն անընդհատ մեծանում է:
- 5) Վերջին տասնամյակներին համաշխարհային արդյունաբերությունում կայուն և արագ զարգացմամբ աչքի են ընկել մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը և էլեկտրաէներգետիկան:
- 6) Արդյունահանող ճյուղերի տեղաբաշխման գործում որոշիչ է բնական ռեսուրսների ազդեցությունը:

74. Աշխարհի վառելիքաէներգետիկ արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ

- 1) Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը համալիր ճյուղ է՝ բաղկացած վառելիքային արդյունաբերությունից և էլեկտրաէներգետիկայից:
- 2) Վառելիքաէներգետիկ արդյունաբերության զարգացման հաջորդական երեք փուլերն են ածխայինը, միջուկայինը և նավթագազայինը:
- 3) Նավթի հանույթի ծավալով առաջատար երկրներ են Ճապոնիան, Գերմանիան և Ֆրանսիան:
- 4) Ածխարդյունաբերությունն աշխարհի վառելիքային արդյունաբերության ամենաարագ զարգացող ենթաճյուղն է:
- 5) Էլեկտրաէներգետիկայի արտադրության կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն ջրաէլեկտրակայանները:
- 6) Ատոմային էներգետիկան զարգացած է տնտեսապես զարգացած երկրներում, որոնք վառելիքով ու ջրաէներգետիկ ռեսուրսներով համեմատաբար աղքատ են:

75. Աշխարհի մետաղաձուլության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մետաղաձուլությունը արդյունաբերության նորագույն ճյուղերից է և բաժանվում է երկու ենթաճյուղի՝ սև և գունավոր մետաղաձուլության:
- 2) Սև մետաղաձուլության գլխավոր և ամենատարածված հանքային հումքը երկաթաքարն է:
- 3) Երկաթի հանքաքարի նախնական մշակումը, այսինքն՝ հարստացումն ու խտանյութի արտադրությունը, սովորաբար կատարվում է հումքի արդյունահանման շրջաններում և երկրներում:
- 4) Սև մետաղաձուլությունն արտադրանքի ծավալով մի քանի անգամ զիջում է գունավոր մետաղաձուլությանը, սակայն անհամեմատ ավելի բազմազան ճյուղային կառուցվածք ունի:
- 5) Թեթև գունավոր մետաղների, այդ թվում՝ ալյումինի արտադրությունը հումքատար է և տեղաբաշխվում է հումքային շրջաններում:
- 6) Ծանր գունավոր մետաղների, այդ թվում՝ պղնձի արտադրությունը էներգատար է, ուստի տեղաբաշխվում է էժան էլեկտրաէներգիայի արտադրության շրջաններում:

76. Աշխարհի բուսաբուծության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Արևմտյան Եվրոպայի երկրներում գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 2) Բուսաբուծության տեղաբաշխման՝ մշակաբույսերի աճեցման վայրի ընտրության գործում կարևորագույն գործոնը՝ տրանսպորտային ապահովվածությունն է:

- 3) Բուսաբուծությունը բաղկացած է դաշտավարությունից՝ դաշտային մշակաբույսերի աճեցումից և այգեգործությունից՝ տարբեր տեսակի մրգերի, ծառերի և թփերի աճեցումից:
- 4) Դաշտավարության մեջ գլխավոր դերը պատկանում է հացահատիկային մշակաբույսերին, մասնավորապես՝ ցորենին, բրնձին և եգիպտացորենին:
- 5) Թելատու մշակաբույսերից է բամբակենին, որի ցանքատարածությունները հիմնականում բարեխառն գոտու անտառների բնական զոնայում են:
- 6) Առույգացնող մշակաբույսերից են սուրճը, որի հայրենիքը Եթովպիան է և կակաոն, որի հայրենիքը Մեքսիկան է:

77. Աշխարհի անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հյուսիսային Եվրոպայի երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքում մեծ է անասնապահության բաժինը: +
- 2) Անասնապահության առաջատար ճյուղերն են ոչխարաբուծությունը և թռչնաբուծությունը:
- 3) Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով աշխարհում առաջին տեղում է Հնդկաստանը, որին հաջորդում են Բրազիլիան, Չինաստանը և ԱՄՆ-ն:
- 4) Խոզերի գլխաքանակով աշխարհում առաջատար տեղ են գրավում Հյուսիսային Աֆրիկան և Հարավարևմտյան Ասիան:
- 5) Ոչխարաբուծությունը զարգանում է հզոր համալիրներում, որոնք կառուցվում են բնակչության խիտ բնակեցված շրջաններում:
- 6) Աշխարհում արտադրվող մսի 3/5-ը տալիս է խոզաբուծությունը:

78. Աշխարհի տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բեռնաշրջանառությունը որոշակի ժամանակահատվածում տեղափոխած բեռների քանակի և փոխադրումների միջին հեռավորության հարաբերությունն է:
- 2) Տրանսպորտի մի քանի տեսակների հաղորդակցության ուղիների ճյուղավորման վայրը կոչվում է տրանսպորտային համակարգ:
- 3) Տրանսպորտային ցանցի կոնֆիգուրացիան կախված է տարածքի մեծությունից և ուրվագծից, բնական պայմաններից, տնտեսության և բնակչության տեղաբաշխման բնույթից:
- 4) Համաշխարհային ուղևորափոխադրումների ոլորտում բացարձակ առաջատարը ավտոմոբիլային, իսկ բեռնաշրջանառության ոլորտում՝ ծովային տրանսպորտն է:
- 5) Առևտրային նավատորմով աշխարհի առաջատար երկրներն են Լիբերիան, Պանաման, Ճապոնիան և Հունաստանը:
- 6) Ծովային փոխադրումների հիմնական բեռներն են նավթն ու նավթամթերքը, հանքաքարի տարբեր տեսակները, հացահատիկը և անտառանյութը:

79. Գերմանիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
- 2) Տնտեսապես ակտիվ բնակչության ճնշող մեծամասնությունը զբաղված է արդյունաբերության մեջ:
- 3) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են մեքենաշինությունն ու քիմիական արդյունաբերությունը:
- 4) Գյուղատնտեսությունն աչքի է ընկնում մեքենայացման ու քիմիացման բարձր մակարդակով:
- 5) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:
- 6) Արտահանման մեջ գերակշռում են բնական գազն ու նավթամթերքները:

80. Իտալիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) «Մեծ յոթնյակի» անդամ պետություններից է: +
- 2) Հարավային Եվրոպա տարածաշրջանում տնտեսության զարգացման մակարդակով երկրորդն է՝ Իսպանիայից հետո:
- 3) Տնտեսությունը գտնվում է զարգացման ինդուստրիալ փուլում:
- 4) Տնտեսապես ակտիվ բնակչության ճնշող մեծամասնությունը զբաղված է սպասարկման ոլորտի ճյուղերում: +
- 5) Արդյունաբերությունը մեծապես կախված է ներմուծվող հումքից և վառելիքից:
- 6) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են նավթաքիմիան և մեքենաշինությունը:

81. Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկիր է:
- 2) Ցածր է բնակչության ծնելիության մակարդակը:
- 3) Երկրի ժողովրդագրական ներկայիս վիճակի համար բնութագրական է «ժողովրդագրական պայթյունը»:
- 4) Բնակչության ընդհանուր թվում մեծ է ծերերի բաժինը:
- 5) Ցածր է բնակչության կյանքի միջին տևողությունը:
- 6) Երկրում ժողովրդագրական քաղաքականություն է տարվում բնակչության ծնելիության կրճատման համար:

82. Հնդկաստանի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնակչության թվաքանակով աշխարհում երկրորդն է:
- 2) Բնակչության վերարտադրության երկրորդ տիպի երկիր է:
- 3) Ցածր է բնակչության ծնելիության մակարդակը:
- 4) Երկրի ժողովրդագրական ներկայիս վիճակի համար բնութագրական է «ժողովրդագրական ճգնաժամը»:

- 5) Բնակչության ընդհանուր թվում մեծ է ծերերի բաժինը:
- 6) Բնակչության մեծամասնությունը բնակվում է գյուղական բնակավայրերում:

83. Ֆրանսիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տարածքի մեծությամբ առաջինն է Արևմտյան Եվրոպայում:
- 2) Ափերը ողողվում են Բիսկայան ծոցի և Միջերկրական ծովի ջրերով:
- 3) Հյուսիսում տարածվում են Պիրենեյան լեռները:
- 4) Հարուստ է ուրանի հանքաքարի պաշարներով:
- 5) Կլիման բարեխառն խիստ ցամաքային է:
- 6) Խոշոր գետերից են Էլբան և Վեզերը:

84. Մեծ Բրիտանիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) ՀՆԱ-ի մեծությամբ առաջինն է Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանում:
- 2) Տնտեսությունը զարգացման ինդուստրիալ փուլում է:
- 3) Հարուստ է նավթի պաշարներով:
- 4) Էլեկտրաէներգիայի արտադրության մեծ մասը բաժին է ընկնում աէկներին:
- 5) Արդյունաբերության ավանդական ճյուղերից է թեթև արդյունաբերությունը:
- 6) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

85. Ռուսաստանի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնակչության թվով և տարածքի մեծությամբ աշխարհի գերխոշոր երկրներից է:
- 2) Բնակչության թվով երկրորդ ազգը ուկրաինացիներն են:
- 3) Բնակչության մեծամասնությունը դավանում է քրիստոնեության ուղղափառ ուղղությունը: +
- 4) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 5) Երկիրը վարում է բնակչության ծնելիությունը խրախուսող ժողովրդագրական քաղաքականությունը:
- 6) Արևմուտքից արևելք բնակչության խտությունը աճում է:

86. Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հարուստ է ածխի և երկաթաքարի պաշարներով:
- 2) Սև մետաղաձուլությունը զարգանում է բացառապես ներկրվող հումքի հիման վրա:
- 3) Մետաղաձուլական շրջանները հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմտյան շրջաններում:
- 4) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը:

- 5) Թեթև արդյունաբերության գլխավոր կենտրոնը Շանհայն է:
- 6) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի և ցեմենտի արտադրությամբ:

87. Ավստրալիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Երկրի արևելյան մասով ձգվում է Մեծ ջրբաժան լեռնաշղթան:
- 2) Հարուստ է նավթի և բնական գազի պաշարներով:
- 3) Ստորերկրյա ջրերի պաշարներով աշխարհի առավել հարուստ երկրներից է:
- 4) Տարածքի մեծ մասը գտնվում է մերձհասարակածային կլիմայական գոտու սահմաններում:
- 5) Չորային կլիմայի պատճառով աղքատ է գետային ցանցը:
- 6) Գետերը հարուստ են ջրաէներգետիկ ներուժով:

88. Աֆրիկայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մակերևույթը արևելքում և հարավում առավելապես լեռնային է:
- 2) Արևմտյան և հյուսիսային շրջանները հարուստ են մետաղային ծագման օգտակար հանածոների պաշարներով:
- 3) Տարածքի մեծ մասը տաք ջերմային գոտու սահմաններում է:
- 4) Տարածքի շուրջ 40 %-ը զբաղեցնում են հասարակածային խոնավ անտառները (ջունգլիները):
- 5) Չորային կլիմայի պատճառով մեծ է Կոնգո գետի ոռոգիչ նշանակությունը:
- 6) Ոռոգման նպատակներով Նեղոս գետի վրա կառուցվել է աշխարհի ամենամեծ ջրամբարը:

89. Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տնտեսության զարգացման մակարդակով առաջինն է Արևելյան Ասիայում:
- 2) ՀՆԱ-ի մեծ մասը բաժին է ընկնում սպասարկման ոլորտի ճյուղերին:
- 3) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 4) Ավտոճանապարհային ցանցի համար բնորոշ են արագընթաց լայնահուն մայրուղիները:
- 5) Բեռնաշրջանառության մեջ մեծ է գետային տրանսպորտի բաժինը:
- 6) Արտահաման մեջ գերակշռում են մեքենաներն ու սարքավորումները:

90. Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տարածքի մեծությամբ և բնակչության թվաքանակով աշխարհի գերխոշոր երկրներից է:
- 2) Բնակչության կեսից ավելին դավանում է բուդդայականություն:
- 3) Բնակչության ազգային կազմով բազմազգ երկիր է:

- 4) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:
- 5) Արևմուտքից արևելք բնակչության խտությունը նվազում է:
- 6) Երկրի խոշորագույն քաղաքները տեղաբաշխված են արևելքում:

91. Թուրքիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով:
- 2) Արդյունաբերության մեջ մեծ է արդյունահանող ճյուղերի բաժինը:
- 3) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է ջէկերում:
- 4) Ունի զարգացած թեթև արդյունաբերություն, որի համար հումք է ծառայում սեփական գյուղատնտեսական արտադրանքը:
- 5) Գյուղատնտեսության առաջատար ճյուղն անասնապահությունն է:
- 6) Բուսաբուծության մեջ մեծ է հացահատիկային և տեխնիկական մշակաբույսերի բաժինը:

92. Իրանի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնակչության թվով առաջինն է Հարավարևմտյան Ասիա տարածաշրջանում:
- 2) Աշխարհի առավել միատարր ազգային կազմ ունեցող երկրներից է:
- 3) Ազգային փոքրամասնություններից առավել մեծ թիվ են կազմում ադրբեջանցիներն ու քրդերը:
- 4) Հավատացյալ բնակչության գերակշիռ մեծամասնությունը դավանում է մահմեդականության սուննի ուղղությունը:
- 5) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 6) Բնակչության տարիքային կազմում մեծ կշիռ են կազմում հետաշխատունակ տարիքի բնակիչները:

93. Արևմտյան Եվրոպայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տարածքի մեծությամբ առաջինն է եվրոպական տարածաշրջաններից:
- 2) Բոլոր երկրները ելք ունեն դեպի Համաշխարհային օվկիանոս:
- 3) Հարուստ է քարածխի պաշարներով:
- 4) Տնտեսության առաջատար ճյուղերից են սև մետաղաձուլությունն ու մեքենաշինությունը:
- 5) Արտահանման գերակշիռ մասը բաժին է ընկնում թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերին:
- 6) Գյուղատնտեսության գլխավոր ճյուղը էքստենսիվ բուսաբուծությունն է:

94. Վրաստանի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնակչության ազգային կազմով բազմազգ երկիր է:
- 2) Ազգային փոքրամասնություններից առավել մեծ թիվ են կազմում հայերը:
- 3) Բնակչության մեծ մասը ուղղափառ քրիստոնյա են:

- 4) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:
- 5) Երկրի ժողովրդագրական իրավիճակի համար բնութագրական է «ժողովրդագրական պայթյուն» երևույթը:
- 6) Բնակչության միջին խտությունը կազմում է մոտ 63 մարդ/կմ²:

95. Լատինական Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աչքի է ընկնում խառը ռասաների մեծ տարածվածությամբ:
- 2) Առավել տարածված լեզուներից են իսպաներենը և պորտուգալերենը:
- 3) Բնակչության ճնշող մեծամասնությունը դավանում է քրիստոնեության բողոքական ուղղությունը:
- 4) Երկրների մեծ մասում ցածր է ուրբանիզացման մակարդակը:
- 5) Տարածաշրջանում են գտնվում աշխարհի առավել խոշոր քաղաքներից Մեխիկոն, Սան Պաուլուն, Ռիո դե Ժանեյրոն:
- 6) Աչքի է ընկնում բնակչության բարձր միջին խտությամբ՝ ավելի քան 100 մարդ/կմ²:

96. Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխարհի առավել չորային տարածաշրջաններից է:
- 2) Աչքի է ընկնում նավթի և բնական գազի հարուստ պաշարներով:
- 3) Զրագրական ցանցը բավականին խիտ է և ունի հավասարաչափ տեղաբաշխում:
- 4) Բերրի սևահողերի մակերեսով աշխարհի առաջատար տարածաշրջաններից է:
- 5) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը ինտենսիվ բուսաբուծությունն է:
- 6) Անասնապահության ճյուղերից առավել զարգացած է մանր եղջերավոր անասնապահությունը:

97. Արևելյան Եվրոպայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տարածքի մեծությամբ և բնակչության թվով առաջինն է Եվրոպա աշխարհամասում:
- 2) Մակերևույթը հիմնականում լեռնային է:
- 3) Ընդերքը հարուստ է վառելիքային և մետաղային ռեսուրսների պաշարներով:
- 4) Կլիման բարեխառն ցամաքային է:
- 5) Զրագրական ցանցը թույլ է զարգացած:
- 6) Տարածաշրջանի գլխավոր հարստություններից են բերրի սևահողերը:

98. Հարավային Եվրոպայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տնտեսական զարգացման մակարդակով առաջինն է Եվրոպական տարածաշրջաններից:
- 2) Տարածաշրջանի ամենազարգացած պետությունն Իտալիան է:
- 3) Արդյունաբերության կառուցվածքում մեծ է արդյունահանող ճյուղերի բաժինը:
- 4) Սեփական նավթային հարուստ ռեսուրսների շնորհիվ ունի զարգացած նավթաքիմիական արդյունաբերություն:
- 5) Էլեկտրաէներգիայի գերակշիռ մասն արտադրվում է աէկներում:
- 6) Հայտնի է բարձրորակ շինանյութերի և շինարարական իրերի արտադրությամբ:

99. Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հյուսիսամերիկյան պլատֆորմի բյուրեղացած հիմքի մերկացած տեղամասերում առաջացել է Կոորդիլիերների լեռնային համակարգը:
- 2) Ամբողջովին արևելյան կիսագնդում է:
- 3) Ատլանտյան օվկիանոսի Լաբրադորյան և Խաղաղ օվկիանոսի Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքներն առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
- 4) Հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
- 5) Լաբրադոր թերակղզում տունդրայի զոնայի հարավային սահմանը Ալյասկայի համեմատ ձգվում է բավականին հյուսիս:
- 6) Ամենաքիչ տեղումները դիտվում են Մեծ Ավազան սարահարթի գոգավորություններում:

100. Հյուսիսային Ամերիկայի կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Կլիմայի ձևավորման վրա ամենամեծ ազդեցությունն ունի Խաղաղ օվկիանոսը:
- 2) Արևելյան ափամերձ շրջաններում ձմեռը մեղմ է, ամառը՝ տաք և խոնավ:
- 3) Ծայր հարավն ընկած է հյուսիսային մերձհասարակածային գոտում:
- 4) Արկտիկական գոտին տարածվում է Լաբրադոր թերակղզու հյուսիսային մասում:
- 5) Մերձարևադարձային գոտու արևմտյան մասի կլիման միջերկրածովային է:
- 6) Կենտրոնական հարթավայրերում տարեկան թափվում են 300–400 մմ, իսկ դրանից արևմուտք ընկած Մեծ հարթավայրերում՝ 700–900 մմ տեղումներ:

101. Աֆրիկայի ջրագրական ցանցի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Գետերը հիմնականում ունեն ձնասառցադաշտային սնում:
- 2) Զրագրական ցանցը ընդհանուր առմամբ բաշխված է հավասարաչափ:
- 3) Աֆրիկայի տարածքի մոտ 1/3-ը հոսք չունի դեպի օվկիանոս:
- 4) Կոնգո գետի ջուրը հիմնականում օգտագործվում է ոռոգման նպատակներով:
- 5) Նյասան և Տանզանիական տեկտոնական ծագման լճեր են:
- 6) Նիգերը և Օրանժը պատկանում են Ատլանտյան օվկիանոսի ավազանին:

102. Հարավային Ամերիկայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հյուսիսային Ամերիկայից բաժանվում է Սուեզի ջրանցքով:
- 2) Հարավարևմտյան ափերի մոտով անցնում է Ֆոլկլենդյան սառը հոսանքը:
- 3) Հարավամերիկյան պլատֆորմի բարձրացած տեղամասերում ձևավորվել են Բրազիլական և Գվիանական սարահարթերը:
- 4) Անդերի՝ 4000 մ-ից վեր տարածվող բարձրալեռնային մարգագետիններին տեղացիներն անվանում են լյանոս:
- 5) Կլիմայի ձևավորման վրա Խաղաղ օվկիանոսի ազդեցությունը սահմանափակում է Անդյան լեռնային համակարգը:
- 6) Ներքին հոսքի ավազանին է պատկանում տարածքի չնչին (շուրջ 2%) մասը:

103. Հյուսիսային Ամերիկայի կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային մերձարևադարձային գոտուց մինչև մերձարկտիկական գոտի:
- 2) Բարեխառն գոտու ներքին շրջաններում կլիման ծովային է:
- 3) Լաբրադորյան և Կալիֆոռնիական սառը ծովային հոսանքները առափնյա շրջաններում առաջացնում են կլիմայի չորություն և օդի ջերմաստիճանի նվազում:
- 4) Գոլֆստրիմ տաք հոսանքը առաջացել է տոռնադոյի պատճառով:
- 5) Ցուկատան թերակղզին գտնվում է արևադարձային կլիմայական գոտում:
- 6) Արկտիկական կլիմայական գոտում տեղումները քիչ են՝ 200-250 մմ:

104. Եվրասիայի ներքին ջրերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Գետերը պատկանում են երեք օվկիանոսների ավազաններին և կենտրոնա-ասիական ներքին անհոսք ավազանին:
- 2) Խաղաղ օվկիանոսի ավազանին են պատկանում մայրցամաքի ամենաջրառատ գետերը:

- 3) Յանցգին, Հուանհեն, Մեկոնգը և Ամուրը հորդանում են ձմռանը:
- 4) Կենտրոնաասիական փակ, ներքին անհոսք ավազանին են պատկանում Վոլգա, Կուր և Արաքս գետերը:
- 5) Տեկտոնահրաբխային ծագման լճերից հայտնի են Վեները և Վետերը:
- 6) Մեռյալ լճի ջրերն այնքան քաղցրահամ են, որ լճում բացակայում է կենդանական աշխարհը:

105. Եվրասիայի մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մեծ Չինական հարթավայրը, Միջինսիբիրական սարահարթը, Արևելա-եվրոպական հարթավայրը, Արաբական սարահարթը, Դեկանի սարահարթը համընկնում են պլատֆորմային շրջաններին:
- 2) Մակերևույթը ձևավորվել է մի քանի հնագույն և երիտասարդ պլատֆորմների վրա:
- 3) Մայրցամաքում ամենաընդարձակը Դեկանի սարահարթն է:
- 4) Վերխոյանսկի և Չերսկու լեռնաշղթաները ալպյան հասակի են:
- 5) Արևմտասիբիրական հարթավայրը Եվրասիայի ակտիվ սեյսմիկ շրջաններից է:
- 6) Ամենաբարձրադիր մայրցամաքն է (միջին բարձրությունը՝ 840 մ):

106. Ավստրալիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հնագույն Լավրասիա մայրցամաքի մասն է հանդիսացել:
- 2) Մայրցամաքի ափերը ողողող Կորալյան ծովում մակերևութային ջրերի բարձր ջերմաստիճանների պայմաններում բազմանում են կորալային պոլիպները:
- 3) Բացակայում են գործող հրաբուխները և ժամանակակից սառցադաշտերը:
- 4) Մայրցամաքի միայն արևմտյան շրջաններն են նոր ծալքավորության մարզում Խաղաղօվկիանոսյան «Հրե օղակում»:
- 5) Մայրցամաքը ձևավորվել է Ավստրալական հնագույն պլատֆորմի վրա:
- 6) Հյուսիսում՝ Առնհեմլենդ և Քեյփ Յորք թերակղզիների միջև, ցամաքի մեջ է խորանում Մեծ ավստրալական ծոցը:

107. Ավստրալիայի օրգանական աշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մայրցամաքի օրգանական աշխարհը զարգացել է մյուս մայրցամաքներից մեկուսացած:
- 2) Տարածված բուսատեսակների և կենդանատեսակների մոտ 50 %-ը էնդեմիկներ են:
- 3) Մայրցամաքը պինգվինի և մրջնակերի հայրենիքն է:
- 4) Մայրցամաքի արևադարձային անապատներում, ի տարբերություն Սահարա անապատի, օազիսները բացակայում են:

- 5) Եվկալիպտի տերևները դեպի Արեգակն ուղղվում են կողերով, այդ պատճառով էլ էվկալիպտի անտառները շատ լուսավոր են:
- 6) Եվկալիպտների անտառները տարածվում են մայրցամաքի հյուսիսում ընկած սավաննաների և նոսրանտառների զոնայի կարմրագորշ հողերում ու Մեծ ջրբաժան լեռնաշղթայի հողմակողմ լանջերին:

108. Անտարկտիդայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Անտարկտիդայի սառցադաշտերը իրենց մեջ ամբարում են մեր մոլորակի մակերևութային քաղցրահամ ջրերի 90%-ը:
- 2) Առափնյա շրջաններում ամռանը սառցադաշտերից ազատված չոր ու ցուրտ քարքարոտ տարածքներն անվանում են անտարկտիկական օազիսներ:
- 3) Ամռան ընթացքում Անտարկտիդան Արեգակից մեծ քանակությամբ ջերմություն է ստանում:
- 4) Կենտրոնական շրջաններում տեղումների միջին տարեկան քանակն ընդամենը 300-400 մմ է:
- 5) Հզոր սառցադաշտերի տակ կան լեռնաշղթաներ, սարահարթեր, հսկայական գոգավորություններ և նույնիսկ իջվածքներ:
- 6) Մայրցամաքի մեծ մասը հարավային բևեռային շրջագծից հյուսիս է:

109. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Մեծ Մասիսից դեպի արևմուտք ձգվում է Հայկական պար լեռնաշղթան:
- 2) Միջնաշխարհի ցածրադիր գոգավորություններում տարածվում է լեռնաանտառային լանդշաֆտը:
- 3) Հյուսիսում տարածվում են Հայկական (Արևելյան) Տավրոսի լեռները:
- 4) Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում վեր են խոյանում Արագած ու Գեղամա լեռնազանգվածները:
- 5) Հարավ-արևելքում է Սավալան հրաբխային վիթխարի զանգվածը:
- 6) Արևելապոնտական լեռների ամենաբարձր գագաթը Կասպուտջուղն է:

110. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասի արևմուտքում է Բյուրակն լեռնազանգվածը:
- 2) Արդահանի և Ախալքալաքի սարավանդները Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում են:
- 3) Արևմտյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից նշանավոր են Մշո և Խարբերդի դաշտերը:
- 4) Արաքս գետի հովտում հայտնի են Կարնո և Երզնկայի դաշտերը:

- 5) Հյուսիսում՝ Սև ծովի ափին զուգահեռ, ավելի քան 500 կմ երկարությամբ ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:
- 6) Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրադիրը Ալաշկերտի դաշտն է:

111. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Միջնաշխարհում արևափայլի տևողությունը ավելի մեծ է, քան եզրային լեռնաշղթաների արտաքին լանջերին:
- 2) Հայկական լեռնաշխարհի հարավում մարտի 21-ին գիշերվա տևողությունն ավելի կարճ է, քան հյուսիսում:
- 3) Հայկական լեռնաշխարհի հարավում հունիսի 22-ին ցերեկվա տևողությունը ավելի երկար է, քան Հյուսիսային բևեռում:
- 4) Հայկական լեռնաշխարհի հարավում դեկտեմբերի 22-ին գիշերվա տևողությունն ավելի երկար է, քան Հարավային բևեռում:
- 5) Հայկական լեռնաշխարհի հյուսիսում սեպտեմբերի 23-ին գիշերվա և ցերեկվա տևողությունը հավասար է:
- 6) Հայկական լեռնաշխարհի հյուսիսում հունիսի 22-ին գիշերվա տևողությունը ավելի երկար է, քան Հյուսիսային բևեռում:

112. Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բարեխառն օդային զանգվածները Հայկական լեռնաշխարհ են թափանցում արևմուտքից:
- 2) Տեղումների առավելագույն քանակը թափվում է Արևելապոնտական լեռների հյուսիսահայաց լանջերին՝ 2000-3000 մմ:
- 3) Արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ տեղումների քանակն ավելանում է:
- 4) Միջնաշխարհում տեղումների միջին տարեկան քանակը 400-500 մմ է:
- 5) Միջլեռնային գոգավորություններում ամռանը հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն:
- 6) Միջնաշխարհում ձմեռը կարճատև է և սակավաձյուն:

113. Հայկական լեռնաշխարհի մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հայկական հրաբխային բարձրավանդակը զբաղեցնում է 370 հազ. կմ² մակերես:
- 2) Ներքին Տավրոսի լեռնագրական մարզի լեռնաշղթաները ձգվում են զուգահեռականի ուղղությամբ:
- 3) Արևելապոնտական լեռները յուրատեսակ ջրբաժան են Սև, Կասպից ծովերի և Պարսից ծոցի միջև:

- 4) Ամենախոշոր լեռնագրական մարզը եզրային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մարզն է:
- 5) Հյուսիսային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների մարզը շուրջ 500 կմ ձգվում է Սև ծովի հարավային ափերի երկայնքով:
- 6) Եզրային ծալքաբեկորավոր լեռներից ամենաբարձրը Տավրոսի լեռնային համակարգն է:

114. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հարավ-արևելքում սահմանակցում է Փոքրասիական բարձրավանդակին:
- 2) Գտնվում է Ալպ-Հիմալայան գեոսինկլինային համակարգի կենտրոնական մասում:
- 3) Մոտավորապես հս. լ. 42° և հս. լ. 37° զուգահեռականների միջև է:
- 4) Հայկական հրաբխային բարձրավանդակը բաժանվում է Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային մասերի:
- 5) Հարթավայրերը զբաղեցնում են տարածքի 1/4-ը: +
- 6) Զիլո, Սավալան և Սիփան լեռնագագաթներն ունեն 3500–4000 մ բարձրություն:

115. Հայկական լեռնաշխարհի մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հարավարևմտյան Ասիայում ամենաբարձրադիրն է:
- 2) Սրմանց, Աժդահակ և Աբուլ լեռնագագաթներն ունեն ծալքաբեկորավոր ծագում:
- 3) Թոնդրակ, Սիփան և Աչքասար լեռնագագաթներն ունեն հրաբխային ծագում:
- 4) Դերջանի և Կարնո դաշտերը Արևմտյան Եփրատի հովտում են:
- 5) Ալաշկերտի և Մշո դաշտերը Արաքս գետի հովտում են:
- 6) Ներքին Տավրոսի լեռնային համակարգում է գտնվում Հայկական պար լեռնաշղթան: +

116. Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Կլիման ձևավորող գլխավոր գործոնը Իրանական և Արաբական անապատների մոտիկությունն է:
- 2) Ամենացուրտ ամիսը հունվարն է, ամենատաքը՝ հուլիսը:
- 3) Արեգակի ճառագայթների անկման անկյան տարբերությունը ծայր հյուսիսի և հարավի միջև մոտ 5° է:
- 4) Ծայր հարավում հունիսի 22-ի կեսօրին Արեգակի ճառագայթներն ընկնում են ուղղահայաց:
- 5) Տեղումների քանակն արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ աճում է:
- 6) Ամբողջ տարին տիրապետում է օդային զանգվածների արևելյան հոսքը:

117. Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորությունների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բասենի դաշտը տարածվում է Արաքսի վերին հոսանքի ավազանում:
- 2) Խարբերդի դաշտում միախառնվում են Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերը:
- 3) Արևելյան Եփրատի հովտում ամենաբարձրադիրը Ալաշկերտի դաշտն է:
- 4) Երզնկայի դաշտը Արևմտյան Եփրատի վերին հոսանքի ավազանում է՝ 1800–2400 մ բարձրությունների վրա:
- 5) Կարնո և Դերջանի դաշտերը Արևելյան Եփրատի հովտում են:
- 6) Արևմտյան Եփրատի միջլեռնային գոգավորություններից են Խնուսի, Մշո և Խարբերդի դաշտերը:

118. Հայկական լեռնաշխարհի կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ամենատաք ամիսը հունիսն է:
- 2) Ամենացուրտ ամիսը դեկտեմբերն է:
- 3) Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը գրանցվել է Ուրմիա լճի ավազանում:
- 4) Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է Միջինարաքսյան գոգավորությունում:
- 5) Կլիմայական տարբերությունների առաջացման կարևոր գործոն է լեռնային բարդ ռելիեֆը:
- 6) Միջլեռնային գոգավորություններում ձմռանը հաստատվում է ջերմաստիճանային շրջադասություն:

119. Հայկական լեռնաշխարհի լճերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Վանա և Ուրմիա լճերը անհոսք, աղի լճեր են:
- 2) Փարվանա և Խանչալի լճերն ունեն հրաբխային ծագում:
- 3) Վանա լիճը հնում կոչվել է Տոսպա լիճ, Ռշտունյաց ծով, Նաիրի երկրի ծով:
- 4) Քարի և Սև լճերն ունեն տեկտոնահրաբխային ծագում:
- 5) Ուրմիա լճի նշանավոր կղզիներից է Աղթամարը:
- 6) Լեռնաշխարհի լճերից ամենախորը Վանան է:

120. Հայկական լեռնաշխարհի գետերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ունեն հիմնականում ձնաանձրևային և մասամբ ստորգետնյա սնում:
- 2) Հորդանում են առավելապես ամռանը:
- 3) Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից, Արևելյան Եփրատը՝ Ծաղկավետ լեռներից:

- 4) Արևմտյան Տիգրիս և Արևելյան Տիգրիս գետերի միախառնումից առաջանում է Շատ-Էլ-Արաբ գետը:
- 5) Սև ծովի ավազանին պատկանող գետերից է Ճորոխը:
- 6) Կուր գետի նշանավոր վտակներից են Խրամը, Դեբեդը, Աղստևը:

121. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Լեռնաշխարհում աճող 4000 բուսատեսակներից 200-ը էնդեմիկ են:
- 2) Արարատյան, Նախիջևանի և Ուրմիայի գոգավորությունների նախալեռնային գոտում տիրապետողը լեռնաչորասեր՝ ֆրիգանոիդ բուսականությունն է:
- 3) Անտառների ստորին հարկում տիրապետում են փշատերև, վերին հարկում՝ լայնատերևներ ծառատեսակները:
- 4) Արևելապոնտական լեռների սևծովյան առափնյա շրջաններում խոնավ մերձարևադարձային կլիմայի պայմաններում ձևավորվել են կարմրագորշ հողերը:
- 5) Լեռնամարգագետնային հողերում հումուսի պարունակությունը բարձր է՝ 11-15 %:
- 6) Լեռնաշխարհի զբաղեցրած փոքր տարածքի պատճառով բուսականությունը բազմազան չէ:

122. Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը (-46°C) դիտվել է Կարսի սարահարթում:
- 2) Տեղումների առավելագույն քանակը թափվում է Արևելապոնտական լեռների հյուսիսահայաց լանջերին՝ 2000-3000 մմ:
- 3) Տարվա տաք կեսին տիրապետում են արևադարձային օդային զանգվածները:
- 4) Գետերը հորդանում են առավելապես աշնանը:
- 5) Միջնաշխարհում տեղումների միջին տարեկան քանակը 800-1000 մմ է:
- 6) Վերընթաց գոտիականությունը թույլ է արտահայտված:

123. ՀՀ կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
- 2) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
- 3) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:
- 4) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը դիտվում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):
- 5) Միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):
- 6) Կլիմայաստեղծ գործոններից են մուսսոնները:

124. ՀՀ ջրագրական ցանցի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Այդր և Արփի լճերը, որոնք հիմնականում սնվում են իրենց մեջ թափվող գետակներից և ստորերկրյա ջրերից, անհոս լճեր են:
- 2) Արտեզյան ավազանի ջրերը բարձր հանքայնացման շնորհիվ պիտանի չեն խմելու և ոռոգման նպատակներով օգտագործելու համար:
- 3) Ջրային պաշարների մեծ մասը ձևավորվում է հարևան տարածքներից՝ Արաքս գետի ջրային պաշարների հաշվին:
- 4) Գետային ցանցն առավել զարգացած է Կուրի ավազանում և Զանգեզուրի ծալքաբեկորավոր լեռների շրջանում:
- 5) Ամենամեծ հանքայնացումն ունեն Արաքսի ավազանին պատկանող հրաբխային ծածկույթների տարածման շրջանի ջրերը:
- 6) Պարզ լիճը գոյացել է սողանքային պատվարի (արգելափակման) շնորհիվ:

125. ՀՀ մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Սևանա լիճը արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
- 2) Շիրակի լեռնաշղթան ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ Բազումի լեռնաշղթայից մինչև Վիրահայոց լեռնաշղթա:
- 3) Սյունիքի բարձրավանդակի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Իշխանասարն է:
- 4) Արփայի գոգավորությունը Հարավային ծալքաբեկորավոր լեռնաշղթաների և միջլեռնային գոգավորությունների մարզում է:
- 5) Փամբակի և Ծաղկունյաց լեռներն արտաքին շարի լեռներ են:
- 6) Եղնախաղի լեռնավահանը ձգվում է Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանի ուղղությամբ:

126. ՀՀ մակերևույթի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Սևանա լիճը եզրավորվում է միայն ծալքաբեկորավոր լեռներով:
- 2) ՀՀ ամենաբարձր ծալքաբեկորավոր լեռնագագաթը Կապուտջուղն է:
- 3) Ծղուկ և Մեծ Իշխանասար գագաթները Սյունիքի բարձրավանդակում են:
- 4) Ուրծի լեռնաշղթայից սկսվում և դեպի արևելք գալարածն տարածվում են Բարգուշատի և Զանգեզուրի լեռնաշղթաները:
- 5) Սևանա լիճը արևմուտքից եզրավորվում է Արեգունու և Սևանի լեռնաշղթաներով:
- 6) Գեղամա լեռնավահանը ճառագայթաձև մասնատվել է Գեղարոտ և Ամբերդ գետերի խորը հովիտներով:

127. ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Տարածքի 70%-ը բարձր է 1500 մ-ից և այդ բարձրություններում է բնակվում հանրապետության բնակչության կեսից ավելին:
- 2) Արարատյան դաշտի առանձին տեղամասերում գյուղերը ձուլվել են իրար՝ առաջացնելով համատարած տարաբնակեցում:
- 3) Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ծնելիության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1990 թ-ին:
- 4) Բնակչության թվաքանակը փոփոխվել է միայն բնակչության բնական շարժի շնորհիվ:
- 5) Բնակչության միջին խտությունը սահմանակից երկրների համեմատությամբ ցածր է:
- 6) Բնակչության խտությունը տեղանքի բարձրության մեծացմանը զուգընթաց նվազում է:

128. ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Եզդիների մեծ մասը բնակվում են Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերում:
- 2) Մինչև 1000 մ բարձրությունները ՀՀ ամենանոսրաբնակ տարածքն է:
- 3) 1988-1990 թթ. ավելի քան 180 հազ. ադրբեջանցիներ Հայաստանից հեռացան, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Ադրբեջանից արտաքսված հայությունը:
- 4) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:
- 5) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է:
- 6) Հարևան պետությունների համեմատ բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:

129. ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ամենանոսր բնակեցվածը Վայոց ձորի մարզն է:
- 2) Բնակչության միջին խտությունն ամենաբարձրն է մինչև 1000 մ բարձրության գոտում:
- 3) Բնակչության բնական աճը կազմում է մոտ 9%:
- 4) Թվաքանակով երկրորդ ազգը ռուսներն են:
- 5) 60-ից բարձր տարիք ունեցողները կազմում են բնակչության շուրջ 6%-ը:
- 6) Բնակչության ընդհանուր թվում կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:

130. ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնակչության խտությունն ըստ բարձրության ավելանում է:
- 2) Մինչև 1000 մ բարձրություններում է կենտրոնացած բնակչության կեսից ավելին:
- 3) Աշխատանքային ռեսուրսները կազմում են բնակչության 82%-ը:
- 4) 1946-1948 թվականներին տեղի է ունեցել կազմակերպված հայրենադարձության երկրորդ փուլը:
- 5) Կանանց կյանքի միջին տևողությունն ավելի բարձր է, քան տղամարդկանցը:
- 6) Թոշակային տարիքի բնակչության բաժինը տարեցտարի ավելանում է:

131. ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աշխատանքային օրենսդրությամբ աշխատանքային ռեսուրսների տարիքը 16-63-ն է:
- 2) Տղամարդկանց և կանանց թվաքանակը հավասար է:
- 3) Սահմանակից պետությունների համեմատ ամենախտաբնակ պետությունն է:
- 4) Ներգաղթողների թվաքանակը զգալիորեն գերազանցում է արտագաղթողների թվաքանակին:
- 5) Ամենացածրադիր բնակավայրը Լոռու մարզում է՝ Դեբեդ գետի ափին:
- 6) Բնակչության մշտական բնակեցման գոտին ընդգրկում է 400-2400 մ բարձրությունները:

132. ՀՀ քաղաքների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Վանաձորը, Գյումրին և Հրազդանը բազմագործառույթային քաղաքներ են:
- 2) Մեծամորը և Բյուրեղավանը միագործառույթային քաղաքներ են:
- 3) Աբովյանը և Կապանը ունեն 20-30 հազ. բնակիչ:
- 4) Գորիս և Գավառ քաղաքները հիմնադրվել են Հայաստանի խորհրդայնացումից հետո:
- 5) Իջևանը և Եղեգնաձորը տարածաշրջանային կենտրոններ են:
- 6) Սիսիան, Թալին և Սպիտակ քաղաքները տարածաշրջանային կենտրոններ չեն:

133. ՀՀ քաղաքների վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Նոյեմբերյան և Բերդ քաղաքներն ունեն 30-40 հազ. բնակիչ:
- 2) Ապարան և Հրազդան քաղաքները Երևանին ավելի մոտ են, քան Արթիկ ու Մարալիկ քաղաքները:
- 3) Սպիտակ և Վանաձոր քաղաքներով հոսում է Ձորագետը:

- 4) Դիլիջան և Իջևան քաղաքներով հոսում է Աղստև գետը:
- 5) Գորիս, Սիսիան, Մեղրի քաղաքները տրված են բնակչության թվաքանակի նվազման ճիշտ հերթականությամբ:
- 6) Ճամբարակ, Վարդենիս և Սևան քաղաքները տրված են բնակչության թվաքանակի աճման ճիշտ հերթականությամբ:

134. ՀՀ գյուղական բնակավայրերի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բարձրլեռնային գոտու գյուղական բնակավայրերի ցանցը նոսրացել է:
- 2) Առավել խոշոր գյուղերից են Ախուրյանը և Վարդենիկը:
- 3) Սյունիքի և Արագածոտնի մարզերում տիրապետողը գյուղական համատարած տարաբնակեցումն է:
- 4) Ամենաբարձրադիր գյուղը Վերին Շորժան է՝ Գեղարքունիքի մարզում:
- 5) Արմավիրի և Արարատի մարզերում գյուղական բնակչության տեսակարար կշիռը ցածր է:
- 6) Սյունիքի և Լոռու մարզերում գյուղական բնակչության տեսակարար կշիռը բարձր է:

135. ՀՀ տնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Գլխավոր առանձնահատկությունը ռեսուրսատար ճյուղերի զարգացումն է:
- 2) Տնտեսությունը գտնվում է զարգացման հետինդուստրիալ փուլում:
- 3) Մեծապես կախված է ներմուծվող էներգակիրներից:
- 4) Սպասարկման ոլորտը նյութական արտադրության ոլորտից ավելի արագ է զարգանում:
- 5) ՀՆԱ-ի կառուցվածքում ամենամեծը տրանսպորտի և կապի բաժինն է:
- 6) Տնտեսությունն ունի բարդ և բազմաճյուղ կառուցվածք:

136. ՀՀ մետալուրգիայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ալյումինի արտադրությունն ունի ավարտուն տեխնոլոգիական ցիկլ:
- 2) Գունավոր մետաղաձուլական համալիրը ՀՀ տնտեսության կառուցվածքում առաջատար դիրք ունի:
- 3) Ճյուղն ունի հարուստ հումքային բազա:
- 4) «Մանես Վալեքս»-ը պղնձաձուլական, սև պղնձի արտադրության խոշոր ձեռնարկություն է:
- 5) Մետալուրգիական ձեռնարկությունները տեղաբաշխված են հումքի աղբյուրների մոտ:
- 6) Սոթքում և Մեղրաձորում կառուցվել են ոսկու կորզման ֆաբրիկաներ:

137. ՀՀ էլեկտրաէներգետիկայի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Էլեկտրաէներգետիկայի կառուցվածքում ամենամեծը ջրաէլեկտրակայանների բաժինն է:
- 2) Ջերմաէլեկտրակայանները տեղակայված են Հրազդանում, Երևանում և Վանաձորում:
- 3) Մեծամորի աէլը միակ ատոմակայանն է Հարավկովկասյան տարածաշրջանում:
- 4) Հրազդան և Որոտան գետերի վրա կառուցվել է ջրաէլեկտրակայանների կասկադ:
- 5) Գործում են ջրային, ջերմային, ատոմային, ինչպես նաև քամու ուժով աշխատող էլեկտրակայաններ:
- 6) Էլեկտրաէներգետիկան բացառապես կախված է ներմուծվող էներգակիրներից:

138. ՀՀ մեքենաշինության վերաբերյալ պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Զարգացած են մետաղատար և քիչ աշխատատար ճյուղերը:
- 2) ՀՆԱ-ի կառուցվածքում ունի ամենամեծ բաժինը:
- 3) Ճյուղերն ու ենթաճյուղերն ունեն համակենտրոնացման բարձր աստիճան:
- 4) Ամենազարգացած ենթաճյուղը էլեկտրատեխնիկականն է:
- 5) Ճյուղի տեղաբաշխումը ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
- 6) Ճյուղի զարգացման կարևոր նախադրյալներից էր գիտահետազոտական հիմնարկների և բարձրորակ ինժեներատեխնիկական կադրերի առկայությունը:

139. ՀՀ քիմիական արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ճյուղին բնորոշ տարածքային բարձր համակենտրոնացումը:
- 2) Երևանի «Դոդագործ»-ը պոլիմերային նյութերի վերամշակման և ավտոդողերի արտադրման ձեռնարկություն է:
- 3) Ճյուղի հեռանկարային ենթաճյուղը գիտատար, նուրբ ու ճշգրիտ տեխնոլոգիա պահանջող փոքր քիմիան է:
- 4) Ճյուղի առաջինը կառուցված ձեռնարկությունը Երևանի քիմիական ռեակտիվների գործարանն է:
- 5) Ճյուղի զարգացմանն առավելապես նպաստել է հանքային քիմիական հումքի խոշոր պաշարների առկայությունը:
- 6) Ճյուղը զարգացման տեմպերով գերազանցում է բոլոր ճյուղերին:

140. ՀՀ թեթև արդյունաբերության վերաբերյալ պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ճյուղի երիտասարդ ենթաճյուղերից է կոշկագործությունը:
- 2) Գորգագործությունը չունի արտահանման նշանակություն:
- 3) Գյումրին տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոն է:
- 4) Ճյուղի առաջատար ենթաճյուղերից է քիմիական մանրաթելերի արտադրությունը:
- 5) Ճյուղը աշխատատար է:
- 6) Մետաքսաթելի, մետաքսե գործվածքների արտադրության միակ կենտրոնը Երևանն է:

141. ՀՀ սննդի արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Գինու-կոնյակի և պահածոների արտադրություններն ունեն արտահանման մեծ նշանակություն:
- 2) Ճյուղն ամբողջովին բավարարում է մեր երկրի բնակչության պահանջարկը:
- 3) Արդյունաբերության ամենացրված տեղաբաշխումն ունեցող ճյուղն է:
- 4) Ճյուղի բազմաթիվ ենթաճյուղեր գիտատար են:
- 5) Պտուղների և բանջարեղենի արտադրությունները մասնագիտացված են:
- 6) Երևանի կոնյակի գործարանը հայ-ֆրանսիական համատեղ ձեռնարկություն է:

142. ՀՀ շինանյութերի արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ճյուղի զարգացմանն առավելապես նպաստել է բարձրորակ կադրերի առկայությունը:
- 2) Ցեմենտը և գաջը բնական շինանյութեր են:
- 3) Տարածված շինանյութերից արտաքին շուկայում մեծ պահանջարկ ունեն բազալտը և գրանիտը:
- 4) Ճյուղը հիմնականում հենվում է տեղական հարուստ հումքային բազայի վրա:
- 5) Երիտասարդ և արագ զարգացող ճյուղերից է:
- 6) Ցեմենտի խոշոր գործարաններ կան Հրազդանում և Արարատում:

143. ՀՀ արդյունաբերության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մեքենաշինության տեղաբաշխումն ամբողջությամբ համընկնում է գունավոր մետաղաձուլության տեղաբաշխման հետ:
- 2) ՀՀ երեք ջերմաէլեկտրակայաններն են Երևանինը, Հրազդանինը և Վանաձորինը:
- 3) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:

- 4) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
- 5) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 6) Այլումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա) հանքավայրերի:

144. ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Անասնապահության արտադրանքի բաժինը զգալիորեն գերակշռում է բուսաբուծության նկատմամբ:
- 2) Հացահատիկի և կարտոֆիլի մշակությունն ունի տեղական նշանակություն:
- 3) Գյուղատնտեսական նշանակության հողերից ամենամեծ մակերեսը զբաղեցնում են վարելահողերը:
- 4) Հողաբարելավման գլխավոր տեսակը քիմիական մեխորացումն է:
- 5) Կարտոֆիլ աճեցվում է բոլոր բնական գոտիների ցանքատարածություններում:
- 6) Բուսաբուծության մասնագիտացման ճյուղերն են խաղողագործությունը և պտղաբուծությունը:

145. ՀՀ անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Թռչնաբուծական ֆարմիկաներն առավելապես տեղաբաշխված են խոշոր քաղաքների կամ արդյունաբերական կենտրոնների մոտակայքում:
- 2) Ոչխարաբուծությունն առավել զարգացած է նախալեռնային և լեռնային շրջաններում:
- 3) Արոտավայրերի գերբեռնվածությունը և գերարածեցումը բնապահպանական հիմնախնդիրներ են առաջացնում:
- 4) Խոշոր եղջերավոր անասնաբուծությունը մյուս ճյուղերի համեմատ խիստ անհամաչափ է տեղաբաշխված:
- 5) Անասնապահության համախառն արտադրանքի մեծ մասը բաժին է ընկնում մանր եղջերավոր անասնապահությանը:
- 6) Խոզաբուծությունն առավել զարգացած է Լոռու և Շիրակի մարզերում:

146. ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Արագածոտնի մարզերի միջին բարձրության սարահարթերն աչքի են ընկնում կարտոֆիլի մշակությամբ:
- 2) Լեռնային՝ 1500-2000 մ բարձրության գոտին մասնագիտանում է ջերմասեր մշակաբույսերի աճեցման մեջ:
- 3) Արարատյան դաշտի աղակալած հողերում ստեղծված արհեստական լճակներում զարգանում է ձկնաբուծությունը:

- 4) Անասնապահությունը զարգացել է բացառապես բնական արոտային թարմ խոտի բազայի հիման վրա:
- 5) Գինու-կոնյակի արտադրությունը տեղաբաշխված է խաղողագործական շրջաններում:
- 6) Չորացման շնորհիվ լեռնամարգագետնային հողերը դարձել են մշակովի:

147. ՀՀ տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Խճուղային ճանապարհային ցանցի խտությունը ցածրադիր, տնտեսապես զարգացած շրջաններում ավելի մեծ է, քան բարձրադիր լեռնային շրջաններում:
- 2) Գործող երկաթուղային գլխավոր մայրուղին (Այրում—Վանաձոր—Գյումրի—Մասիս—Երասխավան) ձգվում է միջօրեականի ուղղությամբ՝ հանրապետության կենտրոնական մասով:
- 3) Ի տարբերություն ընդարձակ տարածություններ ունեցող երկրների, բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը տեղի է ունեցել հիմնականում ոչ թե հեռավորությունների, այլ բեռների ծավալների և ուղևորների թվի աճի շնորհիվ:
- 4) Երկաթուղիների երկարությունը չորս անգամ գերազանցում է ավտոմոբիլային ճանապարհների երկարությանը:
- 5) Ռելիեֆային բարդ պայմանների պատճառով խողովակաշարային տրանսպորտը բացակայում է:
- 6) Ունի ներքին միասնական ավտոմոբիլային ճանապարհային ցանց:

148. ՀՀ տրանսպորտի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Խողովակաշարային տրանսպորտն ամենաարագն է զարգանում:
- 2) Արտաքին բեռնափոխադրումներում առաջատարը օդային տրանսպորտն է:
- 3) Բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը հիմնականում պայմանավորված է փոխադրումների հեռավորության աճով:
- 4) Երկաթուղային գլխավոր մայրուղին հանրապետության տարածքի նկատմամբ եզրային դիրք ունի:
- 5) Բարդ ռելիեֆի պայմաններում հանրապետությունում երկաթուղիների կառուցումն ավտոճանապարհների կառուցման համեմատությամբ ավելի էժան է:
- 6) Երևանը, Գյումրին և Հրազդանը երկաթուղային հանգույցներ են:

149. Արարատի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բարձրադիր շրջաններում գերիշխում են կիսաանապատային լանդշաֆտները:
- 2) Տարածքը կազմված է երկու հստակ արտահայտված մասերից՝ լեռնային և հարթավայրային:

- 3) Բնապահպանական հիմնախնդիրներից է ցեմենտի արտադրության ժամանակ փոշու և այլ թափոնների առկայությունը:
- 4) Հաղորդակցության գլխավոր ուղիներն ունեն տարանցիկ նշանակություն:
- 5) Տնտեսության առաջատար ճյուղը արդյունաբերությունն է:
- 6) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:

150. Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բուսաբուծության առաջատար ենթաճյուղը այգեգործությունն է:
- 2) Անասնապահության առաջատար ենթաճյուղերն են խոզաբուծությունը և թռչնաբուծությունը:
- 3) Տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է: +
- 4) Առկա են քրոմիտների և ոսկու պաշարներ: +
- 5) Արդյունաբերության առաջատար արտադրությունը ոսկու ձուլումն է:
- 6) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:

151. Գեղարքունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Սոթքի լեռնանցքով կապված է ԼՂՀ-ին:
- 2) Սևանի լեռնանցքով կապված է Տավուշի մարզին:
- 3) Ցամաքային (ոչ ջրային) տարածքի մեծությամբ զիջում է միայն Սյունիքի մարզին:
- 4) Հողածածկույթում լայն տարածում ունեն լեռնաանտառային գորշ հողերը:
- 5) Արևմուտքից և հարավից եզրավորված է հրաբխային լեռնավահաններով:
- 6) Բարձրաչափական ամենաբարձր և ամենացածր նիշերի տարբերությունն ամենամեծն է հանրապետությունում:

152. Վայոց ձորի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Գեղարքունիքի մարզի հետ կապված է Սելիմի (Վարդենյաց) լեռնանցքով:
- 2) Անտառները զբաղեցնում են տարածքի մակերեսի մոտ կեսը:
- 3) Տնտեսության զարգացման գործում մեծ դեր ունի կուրորտային տնտեսությունը: +
- 4) Տիրապետում են լեռնամարգագետնային լանդշաֆտները:
- 5) Արդյունաբերության առաջատար ճյուղը մանրի արդյունաբերությունն է:
- 6) Ընդերքը հարուստ է մետաղային օգտակար հանածոներով:

153. Տավուշի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Հարավից դեպի հյուսիս շարժվելիս մակերևույթը աստիճանաբար բարձրանում է:
- 2) Գետերը պատկանում են առավելապես Արաքսի ավազանին:
- 3) ՀՀ միակ մարզն է, որը սահմանակից է թե՛ Վրաստանին, թե՛ Ադրբեջանին:
- 4) Հովտային շրջաններում լայն տարածում ունեն սողանքները:
- 5) Կլիման առավելապես չորային և խիստ ցամաքային է:
- 6) ՀՀ ամենաանտառաշատ մարզն է:

154. Տավուշի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Անասնապահության առաջատար ենթաճյուղը ոչխարաբուծությունն է:
- 2) Բուսաբուծության առաջատար ենթաճյուղերն են պտղաբուծությունը, խաղողագործությունը և ծխախոտագործությունը:
- 3) Անտառներն ունեն արդյունագործական մեծ նշանակություն:
- 4) Արդյունաբերական ձեռնարկություններն ունեն մեծ հզորություն:
- 5) Թեթև արդյունաբերության առաջատար ենթաճյուղը գորգագործությունն է:
- 6) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

155. Արմավիրի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ամբողջությամբ անապատակիսաանապատային լանդշաֆտային գոտում է:
- 2) Կլիման չոր մերձարևադարձային է:
- 3) Մակերևույթը բացառապես հարթավայրային է:
- 4) Ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով:
- 5) Տիրապետում են լեռնաանտառային գորշ հողերը:
- 6) Արևելյան մասը զբաղեցնում են հրաբխային սարավանդները:

156. Արմավիրի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բնակչության թվաքանակով ամենափոքրն է հանրապետությունում:
- 2) Տարածքի մեծությամբ ամենափոքրն է հանրապետությունում:
- 3) Ցածր է բնակչության միջին խտությունը:
- 4) Գյուղատնտեսության զարգացման գլխավոր պայմանը ոռոգումն է:
- 5) ՀՀ տնտեսության մեջ մարզի տեղը և դերը որոշող գլխավոր ճյուղը էլեկտրաէներգետիկան է:
- 6) Արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալում մեծ է գինու–կոնյակի և պահածոների արտադրության բաժինը:

157. Արագածոտնի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ընդերքը հարուստ է հրաբխային ապարատեսակներով:
- 2) Բարձրաչափական նիշերի մեծ տարբերության պատճառով կլիման բազմազան է:
- 3) Բացակայում են ծալքաբեկորավոր լեռնաշղթաները:
- 4) Հողածածկություն գերակշռում են լեռնային սևահողերը:
- 5) Հողաբարելավման կարևոր տեսակներից են ոռոգումը և քարամաքրումը:
- 6) Ամենաբարձրադիրը Թալիսի և Կարմրաշենի սարավանդներն են:

158. Արագածոտնի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Աջքի է ընկնում գինու, կոնյակի, կաթի և կաթնամթերքի արտադրությամբ:
- 2) Հանրապետության խտաբնակ մարզերից է:
- 3) Միջին և բարձր գոտիներում առավել զարգացած են խաղողագործությունն ու պտղաբուծությունը:
- 4) Տնտեսության զարգացման գործում մեծ դեր է խաղում արևմտյան մասով անցնող Երևան—Թբիլիսի երկաթուղին:
- 5) Անասնապահության ենթաճյուղերից առավել զարգացած են տավարաբուծությունը և ոչխարաբուծությունը:
- 6) Ոռոգովի հողագործության համար հիմք են հանդիսացել Թալիսի և Արզնի-Շամիրամի մայր ջրանցքները:

159. Լոռու մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Ընդերքը հարուստ է հատկապես մետաղային օգտակար հանածոներով:
- 2) Անտառներն առավելապես տարածվում են մարզի արևմտյան և հարավարևմտյան շրջաններում:
- 3) ՀՀ միակ մարզն է, որ սահմանակից է և՛ Վրաստանին, և՛ Ադրբեջանին:
- 4) Փամբակը, Ձորագետը և Դեբեդը գլխավոր գետային զարկերակներն են:
- 5) Շամլուղի և Ախթալայի մոտ կան բազմամետաղների խոշոր պաշարներ:
- 6) Կան թե՛ հրաբխային, թե՛ ծալքաբեկորավոր լեռներ:

160. Լոռու մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Բոլոր քաղաքները երկաթուղային կայարաններ են:
- 2) Ուրբանիզացման մակարդակն ամենաբարձրն է հանրապետությունում:
- 3) Ունի բարենպաստ տրանսպորտաաշխարհագրական դիրք:

- 4) Անասնապահության առաջատար ենթաճյուղը կաթնատու տավարաբուծությունն է:
- 5) Գինու–կոնյակի արտադրությունը զարգացած է:
- 6) Լոռվա սարահարթում բուսաբուծության առաջատար ենթաճյուղը պտղաբուծությունն է:

161. Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Արտաքին հաղորդակցությունն իրականացվում է միայն արևմուտքից արևելք ուղղությամբ:
- 2) Ընդերքն աղքատ է մետաղային օգտակար հանածոներով:
- 3) Գորգերի և տեքստիլ արտադրանքով հանրապետության առաջատար մարզերից է:
- 4) Այստեղ են գտնվում ՀՀ ամենահզոր ջրա- և ջերմաէլեկտրակայանները:
- 5) Թռչնաբուծությունն անասնապահության առաջատար ենթաճյուղերից է:
- 6) Մեքենաշինության առաջատար ենթաճյուղերն են հաստոցաշինությունը, սարքաշինությունը և ադամանդագործությունը:

162. Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) ՀՀ միակ մարզն է, որը չունի արտաքին սահմաններ:
- 2) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները:
- 3) Շատ հարուստ է հանքային աղբյուրներով:
- 4) Անտառները տարածվում են մարզի արևելյան շրջաններում:
- 5) Արևելյան սահմանն անցնում է Գեղամա հրաբխային լեռնավահանի ջրբաժան գծով:
- 6) Կենտրոնական շրջաններում տիրապետողը կիսաանապատային լանդշաֆտներն են:

163. Շիրակի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) ՀՀ միակ մարզն է, որ սահմանակից է Վրաստանին և Թուրքիային:
- 2) Անտառները զբաղեցնում են մարզի տարածքի շուրջ 20%-ը:
- 3) Ընդերքը հարուստ է մետաղային հանածոներով և հանքային աղբյուրներով:
- 4) Մարզի և Թուրքիայի միջև սահմանն ամբողջությամբ անցնում է Ախուրյան գետով:
- 5) Հյուսիս–արևմուտքում և հյուսիս–արևելքում կան հրաբխային լեռնավահաններ:
- 6) Ձմեռը մեղմ է ու սակավաձյուն:

164. Շիրակի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) ՀՀ խաղողագործական չորս շրջաններից մեկն է:
- 2) Խոզաբուծությունը և թռչնաբուծությունը թույլ են զարգացած:
- 3) Թեթև արդյունաբերության ենթաճյուղերից առավել զարգացած է տեքստիլը:
- 4) ՀՀ շաքարի միակ գործարանը Ախուրյանում է:
- 5) Շիրակի դաշտը ՀՀ-ում ծխախոտի մշակության գլխավոր շրջաններից է:
- 6) Մարզի ընդերքում կան պեմզայի, տուֆի և գորշ ածխի պաշարներ:

165. Սյունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) ՀՀ միակ մարզն է, որ սահմանակից է մեկ մարզի:
- 2) ՀՀ միակ մարզն է, որ սահմանակից է Թուրքիային, Իրանին և Ադրբեջանին:
- 3) Վայոց ձորի մարզի հետ կապված է Որոտանի լեռնանցքով:
- 4) Իրանի հետ սահմանն անցնում է Արաքս գետով:
- 5) Լեռնոտությամբ զիջում է միայն Շիրակի և Լոռու մարզերին:
- 6) Մարզի հարավում Սյունիքի հրաբխային բարձրավանդակն է՝ Ծղուկ և Մեծ Իշխանասար կոներով:

166. Սյունիքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Արդյունաբերական համախառն արտադրանքի ծավալով ՀՀ առաջին մարզն է:
- 2) Արդյունաբերության առաջատար ճյուղերից են թեթև արդյունաբերությունը և քիմիականը:
- 3) Ընդերքը հարուստ է երկաթաքարի, պղնձամոլիբդենային հանքանյութերով և նեֆելինային սիենիտներով:
- 4) Հարավում է Հայաստանի չոր մերձարևադարձային պտղաբուծության երկրորդ շրջանը:
- 5) Հյուսիսային շրջաններում առավել զարգացած են պտղաբուծությունը և խաղողագործությունը:
- 6) Բուսաբուծությունը զարգանում է բացառապես ոռոգման շնորհիվ:

167. ԼՂՀ վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Անտառներում գերակշռում են փշատերև ծառատեսակները:
- 2) Անտառային գոտին սկսվում է 1500 մ բարձրությունից:
- 3) Ամենախոշոր գետը Թարթառն է, որի վրա կառուցվել է Սարսանգի ջրամբարը:
- 4) Բոլոր գետերը պատկանում են Կուրի ավազանին:

- 5) Հյուսիսում զուգահեռականի ուղղությամբ ձգվում է Մռավի լեռնաշղթան՝ Գոմշասար բարձր գագաթով (3724 մ):
- 6) Հայաստանի Հանրապետության հետ կապող գլխավոր ճանապարհն անցնում է Օմարի լեռնանցքով:

168. ԼՂՀ վերաբերյալ տրված պնդումներից որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.

- 1) Մեքենաշինական ամենախոշոր ձեռնարկությունը Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանն է:
- 2) Համախառն արտադրանքի ծավալով արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 3) Մեկ շնչին բաժին ընկնող վարելահողերի մակերեսը մի քանի անգամ գերազանցում է ՀՀ համապատասխան ցուցանիշը:
- 4) Զրաէներգետիկան ամբողջությամբ ապահովում է հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկը:
- 5) Գլխավոր հացահատիկային մշակաբույսը աշնանացան ցորենն է:
- 6) Կարտոֆիլի մշակությունը բուսաբուծության մասնագիտացման ճյուղերից է:

ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Տրված են հորիզոնի կողմերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենափոքր ազիմուտ ունեցող կողմից.

- | | |
|-------------------|-----------------|
| 1) արևելք | 3) հյուսիս |
| 2) հյուսիս-արևելք | 4) հարավ-արևելք |

2. Տրված են հորիզոնի կողմերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենափոքր ազիմուտ ունեցող կողմից.

- | | |
|-------------|-------------------|
| 1) հարավ | 3) հարավ-արևմուտք |
| 2) արևմուտք | 4) հարավ-արևելք |

3. Տրված են հորիզոնի կողմերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենամեծ ազիմուտ ունեցող կողմից.

- | | |
|---------------------|-------------------|
| 1) հյուսիս-արևմուտք | 3) արևմուտք |
| 2) հարավ | 4) հարավ-արևմուտք |

4. Տրված են հորիզոնի կողմերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենամեծ ազիմուտ ունեցող կողմից.

- | | |
|-------------------|-----------------|
| 1) հարավ | 3) արևելք |
| 2) հարավ-արևմուտք | 4) հարավ-արևելք |

5. Տրված են հորիզոնի կողմերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենափոքր ազիմուտ ունեցող կողմից.

- | | |
|-----------|-------------------|
| 1) հարավ | 3) արևմուտք |
| 2) արևելք | 4) հյուսիս-արևելք |

6. Տրված են հորիզոնի միջանկյալ կողմերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենամեծ ազիմուտ ունեցող կողմից.

- | | |
|-------------------|---------------------|
| 1) հարավ-արևմուտք | 3) հարավ-արևելք |
| 2) հյուսիս-արևելք | 4) հյուսիս-արևմուտք |

7. Տրված են երկրային խմբի մոլորակները: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ Արեգակից ունեցած հեռավորության աճման կարգով.

- | | |
|-------------|----------|
| 1) Արուսյակ | 3) Հրատ |
| 2) Փայլածու | 4) Երկիր |

8. Տրված են մոլորակներ: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ Արեգակից ունեցած հեռավորության աճման կարգով.

- | | |
|-------------|-------------|
| 1) Լուսնթագ | 3) Արուսյակ |
| 2) Ուրան | 4) Նեպտուն |

9. Տրված են Լուսնթագի կամ Հսկա խմբի մոլորակները: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ Արեգակից ունեցած հեռավորության աճման կարգով.

- | | |
|----------|-------------|
| 1) Երևակ | 3) Լուսնթագ |
| 2) Ուրան | 4) Նեպտուն |

10. Տրված են բոլոր ութ մոլորակները: Վերադասավորել երկրային խմբի մոլորակները՝ Արեգակից ունեցած հեռավորության աճման կարգով.

- | | |
|-------------|-------------|
| 1) Լուսնթագ | 5) Արուսյակ |
| 2) Փայլածու | 6) Ուրան |
| 3) Հրատ | 7) Նեպտուն |
| 4) Երկիր | 8) Երևակ |

11. Տրված են երկրագնդի ներքին կառուցվածքի մասերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենավերին շերտից.

- | | |
|----------------|----------------|
| 1) միջնապատյան | 3) երկրակեղև |
| 2) միջուկ | 4) ասթենոսֆերա |

12. Տրված են երկրագնդի ներքին կառուցվածքի մասերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենաստորին շերտից.

- | | |
|----------------|--------------|
| 1) ասթենոսֆերա | 3) միջուկ |
| 2) միջնապատյան | 4) երկրակեղև |

13. Տրված են մայրցամաքային տիպի երկրակեղևի ապարաշերտերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենավերին շերտից.

- 1) նստվածքային
- 2) բազալտային
- 3) գրանիտային

14. Տրված են մայրցամաքային տիպի երկրակեղևի ապարաշերտերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենաստորին շերտից.

- | | | |
|----------------|---------------|---------------|
| 1) նստվածքային | 2) գրանիտային | 3) բազալտային |
|----------------|---------------|---------------|

15. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն անօրգանական նստվածքային ծագում.

- | | |
|-----------|-----------|
| 1) գրանիտ | 5) խճաքար |
| 2) ավազ | 6) պեմզա |
| 3) գնեյս | 7) կավ |
| 4) տորֆ | 8) մարմար |

16. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն անօրգանական նստվածքային ծագում.

- | | |
|---------------|-------------|
| 1) կավ | 5) խճաքար |
| 2) օբսիդիան | 6) քարածուխ |
| 3) կրաքար | 7) պեմզա |
| 4) կերակրի աղ | 8) խարամ |

17. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն օրգանական նստվածքային ծագում.

- | | |
|----------|-------------|
| 1) ավազ | 5) գնեյս |
| 2) խարամ | 6) խճաքար |
| 3) տորֆ | 7) օբսիդիան |
| 4) կավիճ | 8) կրաքար |

18. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն օրգանական նստվածքային ծագում.

- | | |
|----------|-------------|
| 1) նավթ | 5) պեմզա |
| 2) կվարց | 6) քարածուխ |
| 3) տորֆ | 7) մարմար |
| 4) տուֆ | 8) գնեյս |

19. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն հրային ծագում.

- | | |
|--------------------|-----------|
| 1) մարմար | 5) բազալտ |
| 2) գնեյս | 6) կրաքար |
| 3) տուֆ | 7) կվարց |
| 4) այրվող թերթաքար | 8) խարամ |

20. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն հրային ծագում.

- | | |
|-----------|-------------|
| 1) կավիճ | 5) խարամ |
| 2) տորֆ | 6) օբսիդիան |
| 3) գրանիտ | 7) գնեյս |
| 4) մարմար | 8) քարածուխ |

21. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն փոխակերպային ծագում.

- | | |
|-----------|-------------|
| 1) գնեյս | 5) քարածուխ |
| 2) մարմար | 6) կվարց |
| 3) բազալտ | 7) պեմզա |
| 4) գրանիտ | 8) խճաքար |

22. Գրել այն ապարների համարները, որոնք ունեն փոխակերպային ծագում.

- | | |
|---------------|-----------|
| 1) կերակրի աղ | 5) տուֆ |
| 2) կվարց | 6) գնեյս |
| 3) մարմար | 7) գրանիտ |
| 4) կավիճ | 8) խճաքար |

23. Գրել գործող հրաբուխների համարները.

- | | |
|---------------|----------------|
| 1) Կրակատաու | 5) Թոնդրակ |
| 2) Էլբրուս | 6) Կազբեկ |
| 3) Արագած | 7) Փոքր Արարատ |
| 4) Մեծ Արարատ | 8) Նեմրուֆ |

24. Գրել գործող հրաբուխների համարները.

- | | |
|------------|------------|
| 1) Վեզուվ | 5) Կազբեկ |
| 2) Սիփան | 6) Աչքասար |
| 3) Նեմրուֆ | 7) Էլբրուս |
| 4) Էտնա | 8) Աժդահակ |

25. Գրել այն հրաբուխների համարները, որոնք Եվրասիայում են.

- | | |
|-------------|--------------|
| 1) Հեկլա | 5) Էրեբուս |
| 2) Կամերուն | 6) Ֆուձիյամա |
| 3) Դեմավենդ | 7) Կրակատաու |
| 4) Կոտոպախի | 8) Ռուխ |

26. Գրել այն հրաբուխների համարները, որոնք Աֆրիկայում են.

- | | |
|--------------|----------------|
| 1) Հեկլա | 5) Կիլիմանջարո |
| 2) Ռուխ | 6) Օրիսաբա |
| 3) Կրակատաու | 7) Էրեբուս |
| 4) Կամերուն | 8) Դեմավենդ |

27. Գրել այն հրաբուխների համարները, որոնք Հարավային Ամերիկայում են.

- | | |
|-------------|----------------|
| 1) Ռուխ | 5) Օրիսաբա |
| 2) Կոտոպախի | 6) Կրակատաու |
| 3) Էտնա | 7) Կիլիմանջարո |
| 4) Էրեբուս | 8) Հեկլա |

28. Գրել այն հրաբուխների համարները, որոնք Ալպ–Հիմալայան գեոսինկլինալի սահմաններում են.

- | | |
|----------------------|------------|
| 1) Դեմավենդ | 5) Նեմրուֆ |
| 2) Կլուչևակայա սոպկա | 6) Սիփան |
| 3) Ֆուձիյամա | 7) Էրեբուս |
| 4) Էտնա | 8) Ռուխ |

29. Գրել այն հրաբուխների համարները, որոնք Ալպ–Հիմալայան գեոսինկլինալի սահմաններում են.

- | | |
|----------------|-------------|
| 1) Էտնա | 5) Դեմավենդ |
| 2) Ֆուձիյամա | 6) Օրիսաբա |
| 3) Կիլիմանջարո | 7) Էրեբուս |
| 4) Ռուխ | 8) Վեզուվ |

30. Գրել այն հրաբուխների համարները, որոնք խաղաղովկիանոսյան գեոսինկլինալի սահմաններում են.

- | | |
|----------------------|-------------|
| 1) Հեկլա | 5) Դեմավենդ |
| 2) Կամերուն | 6) Էտնա |
| 3) Կլուչևակայա սոպկա | 7) Կոտոպախի |
| 4) Օրիսաբա | 8) Վեզուվ |

31. Գրել այն հրաբուխների համարները, որոնք խաղաղովկիանոսյան գեոսինկլինալի սահմաններում են.

- | | |
|--------------|-------------|
| 1) Օրիսաբա | 5) Ռուխ |
| 2) Հեկլա | 6) Վեզուվ |
| 3) Դեմավենդ | 7) Կամերուն |
| 4) Ֆուձիյամա | 8) Դեմավենդ |

32. Տրված են տարբեր բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրեր: Դասավորել բարձրության աճման կարգով.

- | | |
|--------------|---------------|
| 1) դաշտավայր | 3) ցածրավայր |
| 2) սարահարթ | 4) բարձրավայր |

33. Տրված են տարբեր բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրեր: Դասավորել բարձրության նվազման կարգով.

- | | |
|--------------|---------------|
| 1) դաշտավայր | 3) ցածրավայր |
| 2) սարահարթ | 4) բարձրավայր |

34. Տրված հարթավայրերը դասավորել բարձրության աճման կարգով.

- | | |
|-------------------|------------------|
| 1) Ամազոնի | 3) Մերձկասպյան |
| 2) Միջինսիբիրական | 4) Միջինռուսական |

35. Տրված հարթավայրերը դասավորել բարձրության նվազման կարգով.

- | | |
|---------------|-------------------|
| 1) Միջագետքի | 3) Ասսալի |
| 2) Բրազիլական | 4) Միջինառուսական |

36. Տրված են մթնոլորտի ոլորտները: Դասավորել տրված ոլորտները՝ սկսած ամենացածրից.

- 1) վերնոլորտ
- 2) արտաքին ոլորտ
- 3) ներքնոլորտ

37. Տրված են մթնոլորտի ոլորտները: Դասավորել տրված ոլորտները՝ սկսած ամենավերևից.

- 1) վերնոլորտ
- 2) արտաքին ոլորտ
- 3) ներքնոլորտ

38. Տրված է մթնոլորտի գազային կազմը: Դասավորել տրված կազմը՝ սկսած ամենամեծ պարունակությունից.

- | | | |
|------------|-------------|---------|
| 1) թթվածին | 2) ածխաթթու | 3) ազոտ |
|------------|-------------|---------|

39. Տրված է մթնոլորտի գազային կազմը: Դասավորել տրված կազմը՝ սկսած ամենափոքր պարունակությունից.

- 1) թթվածին
- 2) ածխաթթու և օզոն
- 3) ազոտ

40. Գրել այն սարքերի համարները, որոնցով չափում են մթնոլորտային երևույթներ.

- | | |
|---------------|----------------|
| 1) սեյսմոգրաֆ | 5) անեմոմետր |
| 2) բարոմետր | 6) էխոլոտ |
| 3) կուրվիմետր | 7) պալետկա |
| 4) ֆյուզեր | 8) կողմնացույց |

41. Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------|----------------|
| 1) Կուրո Սիո | 5) Ալյասկայի |
| 2) Գվինեական | 6) Բրազիլական |
| 3) Մոզամբիկի | 7) Գվիանական |
| 4) Գոլֆստրիմ | 8) Մուսսոնային |

42. Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|----------------------------|----------------------|
| 1) Գվիանական | 5) Գոլֆստրիմ |
| 2) Կուրո Սիո | 6) Արևելաավստրալական |
| 3) Ասեդի հրվանդանի | 7) Ալյասկայի |
| 4) Հյուսիսխաղաղօվկիանոսյան | 8) Գվինեական |

43. Տրված են ծովային սառը հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|------------------|----------------|
| 1) Բենգեյան | 5) Կանարյան |
| 2) Կալիֆոռնիական | 6) Օյա Սիո |
| 3) Պերուական | 7) Սոմալիի |
| 4) Լաբրադորյան | 8) Ֆոլկլենդյան |

44. Տրված են ծովային սառը հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|--------------|----------------------|
| 1) Կանարյան | 5) Կալիֆոռնիական |
| 2) Պերուական | 6) Սոմալիի |
| 3) Բենգեյան | 7) Լաբրադորյան |
| 4) Օյա Սիո | 8) Արևմտաավստրալական |

45. Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Հնդկական օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- | | |
|----------------------|--------------------|
| 1) Արևելաավստրալական | 5) Կուրո Սիո |
| 2) Բրազիլական | 6) Մոզամբիկի |
| 3) Մուսսոնային | 7) Գվինեական |
| 4) Գոլֆստրիմ | 8) Ասեդի հրվանդանի |

46. Տրված են ծովային տաք և սառը հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային տաք հոսանքների համարները.

- | | |
|----------------------|------------------|
| 1) Կուրո Սիո | 5) Գվինեական |
| 2) Գոլֆստրիմ | 6) Գվիանական |
| 3) Մոզամբիկի | 7) Բենգեյան |
| 4) Արևմտաավստրալական | 8) Կալիֆոռնիական |

47. Տրված են ծովային տաք և սառը հոսանքներ: Գրել Խաղաղ օվկիանոսի ծովային սառը հոսանքների համարները.

- | | |
|----------------------|----------------------|
| 1) Բրազիլական | 5) Արևելաավստրալական |
| 2) Կանարյան | 6) Պերուական |
| 3) Օյա Սիո | 7) Ֆոլկլենդյան |
| 4) Արևմտաավստրալական | 8) Կալիֆոռնիական |

48. Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել անձրևային սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|--------------|------------|
| 1) Օրինոկո | 5) Օբ |
| 2) Սիրդարյա | 6) Պարանա |
| 3) Կոնգո | 7) Մեկոնգ |
| 4) Կոլումբիա | 8) Մակենզի |

49. Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել սառցադաշտային սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Ենիսեյ | 5) Ամուր |
| 2) Ամուդարյա | 6) Օբ |
| 3) Արաքս | 7) Անգարա |
| 4) Սիրդարյա | 8) Միսիսիպի |

50. Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել ձնաանձրևային (խառը) սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|------------|--------------|
| 1) Զամբեզի | 5) Օբ |
| 2) Ենիսեյ | 6) Ամուդարյա |
| 3) Մուրեյ | 7) Մակենզի |
| 4) Օրանժ | 8) Լենա |

51. Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել լճային սնում ունեցող գետերի համարները.

- | | |
|------------|---------------------|
| 1) Նիգեր | 5) Ինդոս |
| 2) Նեղոս | 6) Սուրբ Լավրենտիոս |
| 3) Հուանիե | 7) Հրազդան |
| 4) Անգարա | 8) Յուկոն |

52. Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել տեկտոնական ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|-------------|--------------|
| 1) Բայկալ | 5) Բալխաշ |
| 2) Մեծ արջի | 6) Էյր |
| 3) Չադ | 7) Տանգանիկա |
| 4) Նյասա | 8) Արալյան |

53. Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել սառցադաշտային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|--------------|-------------------|
| 1) Կասպից | 5) Մեծ ստրուկների |
| 2) Իսիկ Կուլ | 6) Մեռյալ |
| 3) Վեներն | 7) Մեծ արջի |
| 4) Մեծ աղի | 8) Ինարի |

54. Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել մնացորդային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|------------|----------|
| 1) Կասպից | 5) Վերին |
| 2) Լադոգա | 6) Էյր |
| 3) Արալյան | 7) Սևանա |
| 4) Նյասա | 8) Չադ |

55. Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Գրել տեկտոնահրաբխային և խառնարանային ծագում ունեցող լճերի համարները.

- | | |
|------------|-------------|
| 1) Վանա | 5) Նեմրուֆի |
| 2) Օնեգա | 6) Ռուդոլֆ |
| 3) Սևանա | 7) Բայկալ |
| 4) Օնտարիո | 8) Արմադանի |

56. Վերադասավորել տրված նեղուցների հաջորդականությունը՝ Ազովի ծովից դեպի Ատլանտյան օվկիանոս ուղղությամբ.

- | | |
|--------------|-------------------|
| 1) Բոսֆորի | 5) Սկագերակ |
| 2) Լա Մանշ | 6) Կերչի |
| 3) Դարդանեղի | 7) Բաբ-Էլ-Մանդեբի |
| 4) Բերինգի | 8) Զիբրալթարի |

57. Վերադասավորել տրված նեղուցների և ջրանցքների հաջորդականությունը՝ Սև ծովից դեպի Հնդկական օվկիանոս ուղղությամբ.

- | | |
|---------------|-------------------|
| 1) Դարդանեղի | 5) Սուեզի |
| 2) Մալակկայի | 6) Դրեյկի |
| 3) Բոսֆորի | 7) Բաբ-Էլ-Մանդեբի |
| 4) Զիբրալթարի | 8) Օրմուզի |

58. Գրել նավարկելի ջրանցքների համարները.

- | | |
|--------------|--------------|
| 1) Ֆլորիդայի | 5) Քիլի |
| 2) Բերինգի | 6) Զոնդյան |
| 3) Պանամայի | 7) Սուեզի |
| 4) Կուկի | 8) Թաթարական |

59. Գրել Եվրոպայի ափերը ողողող ծովերի համարները.

- | | |
|----------------|----------------|
| 1) Կարմիր | 5) Հյուսիսային |
| 2) Միջերկրական | 6) Կորալյան |
| 3) Բաֆինի | 7) Բալթիկ |
| 4) Կարիբյան | 8) Սև |

60. Գրել Ասիայի ավերը ողողող ծովերի համարները.

- | | |
|---------------|----------------|
| 1) Նորվեգական | 5) Լապտնների |
| 2) Թասմանի | 6) Օխոտի |
| 3) Արաբական | 7) Հյուսիսային |
| 4) Ադրիատիկ | 8) Դեղին |

61. Գրել Ամերիկա աշխարհամասի ավերը ողողող ծովերի համարները.

- | | |
|---------------|----------------|
| 1) Ամունդսենի | 5) Հյուսիսային |
| 2) Բոֆորտի | 6) Ռոսսի |
| 3) Կարիբյան | 7) Բաֆինի |
| 4) Բերինգի | 8) Կորալյան |

62. Գրել Անտարկտիդայի ավերը ողողող ծովերի համարները.

- | | |
|--------------------|---------------|
| 1) Թասմանի | 5) Ամունդսենի |
| 2) Չուկոտյան | 6) Լապտնների |
| 3) Բելինսսիաուզենի | 7) Ռոսսի |
| 4) Բարենցի | 8) Ուեդդելի |

63. Գրել Եվրասիայի ավերը ողողող ծովածոցերի համարները.

- | | |
|------------------|---------------|
| 1) Կարպենտարիայի | 5) Բենգալական |
| 2) Բիսկայան | 6) Լա Պլատայի |
| 3) Պարսից | 7) Ադենի |
| 4) Ալյասկայի | 8) Գվինեական |

64. Գրել Ամերիկա աշխարհամասի ավերը ողողող ծովածոցերի համարները.

- | | |
|---------------|----------------------|
| 1) Բենգալական | 5) Բիսկայան |
| 2) Հուդզոնի | 6) Ալյասկայի |
| 3) Գվինեական | 7) Սուրբ Լավրենտիոսի |
| 4) Լա Պլատայի | 8) Օմանի |

65. Գրել Միջերկրական ծովում գտնվող կղզիների համարները.

- | | |
|--------------|-------------|
| 1) Շրի Լանկա | 5) Հաիթի |
| 2) Իսլանդիա | 6) Կորսիկա |
| 3) Կիպրոս | 7) Թասմանիա |
| 4) Սիցիլիա | 8) Սարդինիա |

66. Գրել Եվրոպա աշխարհամասին պատկանող կղզիների և կղզեխմբերի համարները.

- | | |
|-----------------|-------------|
| 1) Մեծ Բրիտանիա | 5) Կորսիկա |
| 2) Նորսիբիրական | 6) Թասմանիա |
| 3) Իռլանդիա | 7) Իսլանդիա |
| 4) Կուբա | 8) Ճամայկա |

67. Գրել Մեծ Զոնոյան կղզեխմբին պատկանող կղզիների համարները.

- | | |
|--------------|---------------|
| 1) Ճամայկա | 5) Կրետե |
| 2) Սիկոկո | 6) Սումատրա |
| 3) Սուլավեսի | 7) Հոկայդո |
| 4) Ճավա | 8) Կալիմանտան |

68. Գրել Ճապոնական կղզեխմբին պատկանող կղզիների համարները.

- | | |
|-------------------|-------------|
| 1) Ճամայկա | 5) Սիկոկո |
| 2) Նյուֆաունդլենդ | 6) Հոնսյու |
| 3) Հոկայդո | 7) Սախալին |
| 4) Կրետե | 8) Կյուսյու |

69. Գրել Մեծ Անտիլյան կղզեխմբին պատկանող կղզիների համարները.

- | | |
|----------------|-----------------|
| 1) Կուբա | 5) Վանկուվեր |
| 2) Ֆոլկլենդյան | 6) Ճամայկա |
| 3) Հրո երկիր | 7) Վիկտորիա |
| 4) Հաիթի | 8) Պուերտո-Ռիկո |

70. Գրել Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում գտնվող կղզիների և կղզեխմբերի համարները.

- | | |
|-------------------------|----------------------|
| 1) Կանադական արկտիկական | 5) Նոր Երկիր |
| 2) Նոր Զելանդիա | 6) Սախալին |
| 3) Շպիցբերգեն | 7) Հյուսիսային երկիր |
| 4) Նյուֆաունդլենդ | 8) Կուրիլյան |

71. Գրել Ատլանտյան օվկիանոսում և Նրա ծովերում գտնվող կղզիների և կղզեխմբերի համարները.

- | | |
|-------------------|----------------|
| 1) Մադագասկար | 5) Ֆոլկլենդյան |
| 2) Իսլանդիա | 6) Սարդինիա |
| 3) Նյուֆաունդլենդ | 7) Ալեուքյան |
| 4) Շրի Լանկա | 8) Կուրիլյան |

72. Գրել Խաղաղ օվկիանոսում և նրա ծովերում գտնվող կղզիների և կղզեխմբերի համարները.

- | | |
|--------------|---------------|
| 1) Հավայան | 5) Ֆիլիպինյան |
| 2) Ճամայկա | 6) Շայգբերգեն |
| 3) Շրի Լանկա | 7) Թայվան |
| 4) Իսլանդիա | 8) Ֆիջի |

73. Գրել այն թերակղզիների համարները, որոնք Հյուսիսային Ամերիկայում են.

- | | |
|--------------|---------------|
| 1) Կամչատկա | 5) Յուկատան |
| 2) Ֆլորիդա | 6) Սոմալի |
| 3) Լաբրադոր | 7) Կալիֆոռնիա |
| 4) Քեյփ Յորք | 8) Չուկոտյան |

74. Գրել այն թերակղզիների համարները, որոնք Եվրոպայում են.

- | | |
|--------------|-----------------|
| 1) Բալկանյան | 5) Թայմիր |
| 2) Կամչատկա | 6) Պիրենեյան |
| 3) Յուկատան | 7) Չուկոտյան |
| 4) Ապենինյան | 8) Սկանդինավյան |

75. Գրել այն թերակղզիների համարները, որոնք Ասիայում են.

- | | |
|---------------|--------------|
| 1) Փոքր Ասիա | 5) Կամչատկա |
| 2) Յուտլանդիա | 6) Ղրիմի |
| 3) Հինդուստան | 7) Թայմիր |
| 4) Կոլա | 8) Բալկանյան |

76. Գրել այն լճերի համարները, որոնք Հյուսիսային Ամերիկայում են.

- | | |
|-------------|------------|
| 1) Տիտիկակա | 5) Էրի |
| 2) Վերին | 6) Օնեգա |
| 3) Հուրոն | 7) Վինիպեգ |
| 4) Էյր | 8) Վեններն |

77. Գրել այն լճերի համարները, որոնք Եվրոպայում են.

- | | |
|-----------|--------------|
| 1) Լադոգա | 5) Հուրոն |
| 2) Մեոյալ | 6) Վեններն |
| 3) Ինարի | 7) Տանգանիկա |
| 4) Օնեգա | 8) Բալխաշ |

78. Գրել այն լճերի համարները, որոնք Ասիայում են.

- | | |
|-----------|--------------|
| 1) Ուրմիա | 5) Օնեգա |
| 2) Թանա | 6) Իսիկ Կուլ |
| 3) Պոոպո | 7) Աթաբասկա |
| 4) Մեոյալ | 8) Սևանա |

79. Գրել այն լճերի համարները, որոնք Աֆրիկայում են.

- | | |
|----------|-------------|
| 1) Չադ | 5) Բայկալ |
| 2) Թանա | 6) Էյր |
| 3) Նյասա | 7) Վիկտորիա |
| 4) Էրի | 8) Վանա |

80. Գրել այն լճերի համարները, որոնք Ամերիկա աշխարհամասում են.

- | | |
|--------------|------------|
| 1) Տիտիկակա | 5) Էյր |
| 2) Վեներն | 6) Էրի |
| 3) Վերին | 7) Բալխաշ |
| 4) Տանգանիկա | 8) Մեծ աղի |

81. Գրել այն լճերի համարները, որոնք Եվրասիա մայրցամաքում են.

- | | |
|------------|------------|
| 1) Պոոպո | 5) Օնեգա |
| 2) Վանա | 6) Հուրոն |
| 3) Արալյան | 7) Վինիպեգ |
| 4) Ռուդոլֆ | 8) Մեոյալ |

82. Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Խաղաղ օվկիանոս.

- | | |
|--------------|---------------|
| 1) Ամուր | 5) Միսիսիպի |
| 2) Գանգես | 6) Մեկոնգ |
| 3) Յուկոն | 7) Մուրեյ |
| 4) Կոլումբիա | 8) Ռիո Գրանդե |

83. Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.

- | | |
|------------|-------------|
| 1) Մուրեյ | 5) Տիգրիս |
| 2) Ինդոս | 6) Օրանժ |
| 3) Մեկոնգ | 7) Նիգեր |
| 4) Զամբեզի | 8) Սիրդարյա |

84. Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Ատլանտյան օվկիանոս.

- | | |
|-------------|-------------|
| 1) Պարանա | 5) Սեն |
| 2) Կոլորադո | 6) Եփրատ |
| 3) Օրինոկո | 7) Միսիսիպի |
| 4) Զամբեզի | 8) Կուր |

85. Գրել այն երկրների համարները, որոնք ԽՍՀՄ-ի կազմում չեն եղել.

- | | |
|--------------|--------------|
| 1) Վրաստան | 5) Էստոնիա |
| 2) Մոլդովա | 6) Սլովակիա |
| 3) Բուլղարիա | 7) Լատվիա |
| 4) Սլովենիա | 8) Տաջիկստան |

86. Գրել այն երկրների համարները, որոնք ԱՊՀ անդամ են.

- | | |
|-------------|--------------|
| 1) Լիտվա | 5) Բուլղարիա |
| 2) Ռումինիա | 6) Բելառուս |
| 3) Ադրբեջան | 7) Չեխիա |
| 4) Վրաստան | 8) Մոնղոլիա |

87. Գրել այն երկրների համարները, որոնք մերձծովային են.

- | | |
|--------------|--------------|
| 1) Ալժիր | 5) Շվեդիա |
| 2) Բելգիա | 6) Շվեյցարիա |
| 3) Մոլդովա | 7) Մոնղոլիա |
| 4) Հունգարիա | 8) Բոլիվիա |

88. Գրել այն երկրների համարները, որոնք ներքամաքային են.

- | | |
|------------|-------------|
| 1) Եգիպտոս | 5) Պարագվայ |
| 2) Չադ | 6) Մեքսիկա |
| 3) Պերու | 7) Ավստրիա |
| 4) Չեխիա | 8) Լիբանան |

89. Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են խոզաբուծությամբ.

- | | |
|--------------|-------------|
| 1) Հնդկաստան | 5) Թուրքիա |
| 2) Ինդոնեզիա | 6) Չինաստան |
| 3) Պակիստան | 7) Գերմանիա |
| 4) Իրան | 8) Ճապոնիա |

90. Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ.

- | | |
|-----------------|--------------|
| 1) Իրան | 5) Արգենտինա |
| 2) Գերմանիա | 6) Ուկրաինա |
| 3) Կանադա | 7) Ճապոնիա |
| 4) Նոր Զելանդիա | 8) Լեհաստան |

91. Գրել այն երկրների համարները, որոնք թերակղզային են.

- | | |
|--------------|--------------------|
| 1) Արգենտինա | 5) Կոլումբիա |
| 2) Ճապոնիա | 6) Ֆրանսիա |
| 3) Նիգերիա | 7) Իտալիա |
| 4) Բելգիա | 8) Սաուդյան Արաբիա |

92. Գրել այն երկրների համարները, որոնք կղզային չեն.

- | | |
|-------------|---------------|
| 1) Դանիա | 5) Հաիթի |
| 2) Իռլանդիա | 6) Շրի Լանկա |
| 3) Իսլանդիա | 7) Կոստա Ռիկա |
| 4) Կուբա | 8) Կիպրոս |

93. Գրել այն քաղաքների համարները, որոնք մայրաքաղաքներ են.

- | | |
|-------------|------------|
| 1) Ստամբուլ | 5) Մարսել |
| 2) Մոնրեալ | 6) Ռիգա |
| 3) Սիդնեյ | 7) Վարշավա |
| 4) Բելգրադ | 8) Շանհայ |

94. Գրել այն մայրաքաղաքների համարները, որոնք իրենց երկրի ամենախոշոր քաղաքը չեն.

- | | |
|-----------|------------|
| 1) Բեյջին | 5) Անկարա |
| 2) Մինսկ | 6) Բոգոտա |
| 3) Թեհրան | 7) Կահիրե |
| 4) Կիև | 8) Բեյրութ |

95. Գրել այն երկրների համարները, որոնք տարածքով գերխոշոր են.

- | | |
|-------------|-------------|
| 1) Ճապոնիա | 5) Կանադա |
| 2) Բրազիլիա | 6) Նիգերիա |
| 3) Գերմանիա | 7) Թուրքիա |
| 4) Ուկրաինա | 8) Պակիստան |

96. Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության թվով գերխոշոր չեն.

- | | |
|-------------|--------------|
| 1) Ֆրանսիա | 5) Բանգլադեշ |
| 2) Բրազիլիա | 6) Ինդոնեզիա |
| 3) ԱՄՆ | 7) Պակիստան |
| 4) Կանադա | 8) Ճապոնիա |

97. Գրել այն երկրների համարները, որոնք միապետություններ են.

- | | |
|--------------|------------|
| 1) Իսպանիա | 5) Քուվեյթ |
| 2) Գերմանիա | 6) Իրաք |
| 3) Շվեդիա | 7) Իրան |
| 4) Ֆինլանդիա | 8) Վրաստան |

98. Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են.

- | | |
|--------------|-----------------|
| 1) Ֆինլանդիա | 5) Ճապոնիա |
| 2) Շվեդիա | 6) Մեծ Բրիտանիա |
| 3) Դանիա | 7) Եգիպտոս |
| 4) Լատվիա | 8) Իսպանիա |

99. Գրել այն երկրների համարները, որոնք դաշնային պետություններ են.

- | | |
|-------------|--------------|
| 1) Ֆրանսիա | 5) Ղազախստան |
| 2) Իտալիա | 6) Թուրքիա |
| 3) Գերմանիա | 7) Բրազիլիա |
| 4) Ուկրաինա | 8) Լեհաստան |

100. Գրել այն երկրների համարները, որոնք կառավարման ձևով բացարձակ միապետություններ են.

- | | |
|--------------------|-------------|
| 1) Ճապոնիա | 5) Շվեդիա |
| 2) Իսպանիա | 6) Օման |
| 3) Նիդերլանդներ | 7) Դանիա |
| 4) Սաուդյան Արաբիա | 8) Նորվեգիա |

101. Գրել այն երկրների համարները, որոնք մտնում են «Մեծ յոթնյակի» կազմի մեջ.

- | | |
|--------------|--------------|
| 1) Չինաստան | 5) Կանադա |
| 2) Հնդկաստան | 6) Ավստրալիա |
| 3) Ֆրանսիա | 7) Իրան |
| 4) Բրազիլիա | 8) Իսպանիա |

102. Գրել այն երկրների համարները, որոնք ունեն անցումային տնտեսություն.

- | | |
|--------------|-------------|
| 1) Հունաստան | 5) Թուրքիա |
| 2) Բուլղարիա | 6) Ուկրաինա |
| 3) Ավստրիա | 7) Իրաք |
| 4) Բելգիա | 8) Բրազիլիա |

103. Գրել այն երկրների համարները, որոնք տնտեսապես զարգացած են.

- | | |
|-------------|-------------|
| 1) Ռումինիա | 5) Իրան |
| 2) Թուրքիա | 6) Չինաստան |
| 3) Իռլանդիա | 7) Ուկրաինա |
| 4) Սերբիա | 8) Դանիա |

104. Գրել այն երկրների համարները, որոնք խորհրդարանական հանրապետություններ են.

- | | |
|----------------|-------------|
| 1) Հայաստան | 5) Ֆրանսիա |
| 2) Ռուսաստան | 6) Գերմանիա |
| 3) Իրան | 7) Բրազիլիա |
| 4) Հնդկաստան + | 8) ԱՄՆ |

105. Գրել այն երկրների համարները, որոնք ունեն 100 մլն-ից ավելի բնակչություն.

- | | |
|--------------|-----------------|
| 1) Գերմանիա | 5) Իրան |
| 2) Կանադա | 6) Նիդերլանդներ |
| 3) Արգենտինա | 7) Ավստրալիա |
| 4) Բրազիլիա | 8) Ֆրանսիա |

106. Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության մեծ խտություն ունեն.

- | | |
|--------------|-------------|
| 1) ԱՄՆ | 5) Ճապոնիա |
| 2) Հնդկաստան | 6) Կանադա |
| 3) Ռուսաստան | 7) Իրան |
| 4) Ղազախստան | 8) Բրազիլիա |

107. Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության մեծ խտություն չունեն.

- | | |
|-----------------|--------------------|
| 1) Բելգիա | 5) Արգենտինա |
| 2) Նիդեռլանդներ | 6) Գերմանիա |
| 3) Ղազախստան | 7) Մեծ Բրիտանիա |
| 4) Բանգլադեշ | 8) Հարավային Կորեա |

108. Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության համեմատաբար համաչափ տեղաբաշխում ունեն.

- | | |
|--------------|--------------|
| 1) Չինաստան | 5) Ուկրաինա |
| 2) Կանադա | 6) Ավստրալիա |
| 3) Գերմանիա | 7) Բրազիլիա |
| 4) Ռուսաստան | 8) Եգիպտոս |

109. Գրել այն երկրների համարները, որոնք բնակչության խիստ անհավասարաչափ տեղաբաշխում ունեն.

- | | |
|--------------|--------------|
| 1) Լիտվա | 5) Դանիա |
| 2) Մոլդովա | 6) Գերմանիա. |
| 3) Բելգիա | 7) Ուկրաինա |
| 4) Ինդոնեզիա | 8) Ռուսաստան |

110. Գրել այն երկրների համարները, որոնք պատկանում են բնակչության վերարտադրության առաջին տիպին.

- | | |
|------------|--------------|
| 1) Ֆրանսիա | 5) Չեխիա |
| 2) Եգիպտոս | 6) Կամերուն |
| 3) Իրան | 7) Հնդկաստան |
| 4) Լատվիա | 8) Լաոս |

111. Գրել այն երկրների համարները, որոնք պատկանում են բնակչության վերարտադրության երկրորդ տիպին.

- | | |
|------------|-------------|
| 1) Իտալիա | 5) Եթովպիա |
| 2) Իսպանիա | 6) Դանիա |
| 3) Նիգերիա | 7) Լեհաստան |
| 4) Կանադա | 8) Նորվեգիա |

112. Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական պայթյունը».

- | | |
|--------------|-------------|
| 1) ԱՄՆ | 5) Գերմանիա |
| 2) Ճապոնիա | 6) Իտալիա |
| 3) Ռուսաստան | 7) Քենիա |
| 4) Պակիստան | 8) Լեհաստան |

113. Գրել այն երկրների համարները, որոնց բնորոշ է «ժողովրդագրական ճգնաժամը».

- | | |
|-------------|-----------|
| 1) ԱՄՆ | 5) Իրան |
| 2) Կանադա | 6) Լատվիա |
| 3) Ուկրաինա | 7) Սիրիա |
| 4) Թուրքիա | 8) Եմեն |

114. Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության սեռային կազմում գերակշռում են տղամարդիկ.

- | | |
|--------------|-------------|
| 1) Ռուսաստան | 5) Չինաստան |
| 2) Ուկրաինա | 6) Ֆրանսիա |
| 3) Լեհաստան | 7) Բելառուս |
| 4) Հնդկաստան | 8) Գերմանիա |

115. Գրել այն երկրների համարները, որոնց բնակչության տարիքային կառուցվածքում համեմատաբար մեծ է ծերերի բաժինը.

- | | |
|---------------|-------------|
| 1) Ուզբեկստան | 5) Պակիստան |
| 2) Աֆղանստան | 6) Շվեդիա |
| 3) Գերմանիա | 7) Իրան |
| 4) Հնդկաստան | 8) Եգիպտոս |

116. Գրել այն երկրների համարները, որտեղ բնակչության կյանքի միջին տևողությունը բարձր է.

- | | |
|--------------|-------------|
| 1) Հնդկաստան | 5) Նիգեր |
| 2) Բանգլադեշ | 6) Նորվեգիա |
| 3) Տաջիկստան | 7) Կամերուն |
| 4) Ճապոնիա | 8) Անգոլա |

117. Գրել այն երկրների համարները, որոնք բազմազգ չեն.

- | | |
|-------------|-----------------|
| 1) Ճապոնիա | 5) Հնդկաստան |
| 2) Լեհաստան | 6) Ռուսաստան |
| 3) Վրաստան | 7) Չինաստան |
| 4) Իրան | 8) Մեծ Բրիտանիա |

118. Գրել այն երկրների համարները, որտեղ գերակշռում է նեգրոիդ ռասայի բնակչությունը.

- | | |
|--------------|------------|
| 1) Եգիպտոս | 5) Սենեգալ |
| 2) Ալժիր | 6) Թունիս |
| 3) Հնդկաստան | 7) Նեպալ |
| 4) Նիգերիա | 8) Իրաք |

119. Գրել այն երկրների համարները, որտեղ գերակշռում է մոնղոլոիդ ռասայի բնակչությունը.

- | | |
|--------------------|--------------|
| 1) Հնդկաստան | 5) Պակիստան |
| 2) Հարավային Կորեա | 6) Ալբանիա |
| 3) Չինաստան | 7) Թուրքիա |
| 4) Բանգլադեշ | 8) Տաջիկստան |

120. Գրել այն երկրների համարները, որտեղ գերակշռում է եվրոպեոիդ ռասայի բնակչությունը.

- | | |
|-------------|--------------------|
| 1) Վիետնամ | 5) Ինդոնեզիա |
| 2) Մոզամբիկ | 6) Ավստրալիա |
| 3) Մեքսիկա | 7) Ալժիր |
| 4) Նիգերիա | 8) Հարավային Կորեա |

121. Գրել այն երկրների համարները, որտեղ գերակշռում են խառը ռասաները.

- | | |
|------------|--------------|
| 1) Մեքսիկա | 5) Իրան |
| 2) Շվեդիա | 6) Իսպանիա |
| 3) ԱՄՆ | 7) Կոլումբիա |
| 4) Անգոլա | 8) Սիրիա |

122. Գրել այն ժողովուրդների համարները, որոնք թիվն ավելի քան 100 մլն է.

- | | |
|-----------------|--------------------|
| 1) գերմանացիներ | 5) ֆրանսիացիներ |
| 2) իսպանացիներ | 6) ռուսներ |
| 3) իտալացիներ | 7) հինդուստանցիներ |
| 4) անգլիացիներ | 8) բենգալացիներ |

123. Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.

- | | |
|---------------|----------------|
| 1) սլավոնական | 5) քարթվելական |
| 2) ռոմանական | 6) իրանական |
| 3) գերմանական | 7) հնդարիական |
| 4) թյուրքական | 8) հայկական |

124. Գրել այն լեզուների համարները, որոնք մտնում են ալթայյան լեզվաընտանիքի մեջ.

- | | |
|-----------------|---------------|
| 1) պարսկերեն | 5) ուզբեկերեն |
| 2) արաբերեն | 6) վրացերեն |
| 3) քրդերեն | 7) իտալերեն |
| 4) ադրբեջաներեն | 8) հինդի |

125. Գրել այն լեզուների համարները, որոնք չեն մտնում սլավոնական լեզվախմբի մեջ.

- | | |
|--------------|----------------|
| 1) լեհերեն | 5) չեխերեն |
| 2) սերբերեն | 6) սլովակերեն |
| 3) շվեդերեն | 7) ռուսերեն |
| 4) էստոներեն | 8) բուլղարերեն |

126. Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով կաթոլիկ են.

- | | |
|-----------------|----------------|
| 1) իսպանացիներ | 5) լեհեր |
| 2) վրացիներ | 6) հույներ |
| 3) պարսիկներ | 7) անգլիացիներ |
| 4) մեքսիկացիներ | 8) հրեաներ |

127. Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով ուղղափառ են.

- | | |
|-----------------|------------------|
| 1) բելառուսներ | 5) ավստրալացիներ |
| 2) սերբեր | 6) իսպանացիներ |
| 3) ֆրանսիացիներ | 7) չեխեր |
| 4) շվեդներ | 8) բրազիլացիներ |

128. Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով բողոքականներ են.

- | | |
|------------------|-------------------|
| 1) ուկրաինացիներ | 5) կոլումբիացիներ |
| 2) իտալացիներ | 6) արաբներ |
| 3) ֆիններ | 7) լեհեր |
| 4) անգլիացիներ | 8) ալբանացիներ |

129. Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով մահմեդականներ չեն.

- | | |
|-------------------|-------------------|
| 1) արաբներ | 5) տաջիկներ |
| 2) պարսիկներ | 6) թուրքմեններ |
| 3) ադրբեջանացիներ | 7) վիետնամցիներ |
| 4) ալբանացիներ | 8) ուրուգվայցիներ |

130. Գրել այն երկրների համարները, որտեղ տարածված է բուդդայականությունը.

- | | |
|-------------|--------------|
| 1) Ճապոնիա | 5) Մյանմա |
| 2) Իսրայել | 6) Լատու |
| 3) Իրան | 7) Բուլղարիա |
| 4) Պակիստան | 8) Ղազախստան |

131. Գրել այն երկրների համարները, որոնք ուրբանիզացման առավել բարձր մակարդակ ունեն.

- | | |
|--------------|--------------|
| 1) Աֆղանստան | 5) Ճապոնիա |
| 2) Արգենտինա | 6) Մոզամբիկ |
| 3) Հնդկաստան | 7) Բանգլադեշ |
| 4) Չինաստան | 8) Բելգիա |

132. Գրել այն երկրների համարները, որոնց ուրբանիզացման տեմպերը բարձր են.

- | | |
|------------|-----------------|
| 1) Իրան | 5) Նիգերիա |
| 2) Ֆրանսիա | 6) Մեծ Բրիտանիա |
| 3) Իտալիա | 7) Շվեդիա |
| 4) Ճապոնիա | 8) Դանիա |

133. Գրել այն քաղաքների համարները, որոնց բնակչության թիվն անցնում է 10 միլիոնից.

- | | |
|-----------|-------------|
| 1) Կիև | 5) Չիկագո |
| 2) Հռոմ | 6) Մելբուռն |
| 3) Մադրիդ | 7) Շանհայ |
| 4) Մեխիկո | 8) Բեռլին |

134. Գրել այն երկրների համարները, որոնք զարգացման հետինդուստրիալ փուլում են.

- | | |
|--------------|--------------|
| 1) Գերմանիա | 5) Հնդկաստան |
| 2) ԱՄՆ | 6) Իրան |
| 3) Ռուսաստան | 7) Ճապոնիա |
| 4) Չինաստան | 8) Բրազիլիա |

135. Գրել այն երկրների համարները, որոնք զարգացման ագրարային փուլում են.

- | | |
|--------------|--------------------|
| 1) Ռուսաստան | 5) Իտալիա |
| 2) Լեհաստան | 6) Բանգլադեշ |
| 3) Չինաստան | 7) Մոզամբիկ |
| 4) Իրան | 8) Հարավային Կորեա |

136. Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են նավթի արդյունահանմամբ.

- | | |
|--------------|--------------------|
| 1) Չինաստան | 5) Սաուդյան Արաբիա |
| 2) Իրան | 6) Եգիպտոս |
| 3) Ռուսաստան | 7) Ուկրաինա |
| 4) Բրազիլիա | 8) Ճապոնիա |

137. Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ածխի արդյունահանմամբ.

- | | |
|-------------|-------------|
| 1) Բրազիլիա | 5) Իրան |
| 2) Կանադա | 6) Պակիստան |
| 3) Չինաստան | 7) Իտալիա |
| 4) ԱՄՆ | 8) Իրաք |

138. Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են երկաթաքարի արդյունահանմամբ.

- | | |
|--------------|--------------|
| 1) Գերմանիա | 5) Ինդոնեզիա |
| 2) Բրազիլիա | 6) Իտալիա |
| 3) Ավստրալիա | 7) Թուրքիա |
| 4) Մեքսիկա | 8) Արգենտինա |

139. Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են պողպատի արտադրությամբ.

- | | |
|--------------|--------------|
| 1) Մեքսիկա | 5) Չինաստան |
| 2) Եգիպտոս | 6) Ճապոնիա |
| 3) Արգենտինա | 7) Ավստրալիա |
| 4) Կանադա | 8) Ղազախստան |

140. Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ալյումինի ձուլմամբ.

- | | |
|--------------|-------------|
| 1) Հնդկաստան | 5) Ուկրաինա |
| 2) Չինի | 6) Իրան |
| 3) Ռուսաստան | 7) Իրաք |
| 4) ԱՄՆ | 8) Ալժիր |

141. Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ջրաէլեկտրակայաններին.

- | | |
|--------------|-------------|
| 1) Ռուսաստան | 5) Կանադա |
| 2) ԱՄՆ | 6) Նորվեգիա |
| 3) Գերմանիա | 7) Լիտվա |
| 4) Ֆրանսիա | 8) Ուկրաինա |

142. Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ատոմային էլեկտրակայաններին.

- | | |
|--------------|-------------|
| 1) Ռուսաստան | 5) Իրան |
| 2) Թուրքիա | 6) Ֆրանսիա |
| 3) Կանադա | 7) Ճապոնիա |
| 4) Բրազիլիա | 8) Չինաստան |

